

№353

АДМ №74/1994 №75



ՆՈՐ ԻՊՐՈՑ

դասագրքի հարստացում

Բ. տարի

կապուցիկ



Գ.Մելիքյան, Գ.Պալեան, Լ.Վարդուկ

НОВАЯ
ШКОЛА
ПЕГОДОБУЧЕНИЯ
СОСТАВИЛИ.
Г. МЕЛИКЯНЦ
Г. ПАЛБЯНЦ
Л. ВАРДУКИ

491.99-8

5-49

ТУРКЕСТАНСКОЕ ГОСУДАРСТВЕННОЕ ИЗДАТЕЛЬСТВО.

1000-10
2 MAR 2014

2004

80907 700

АНТОНОВ
АТЛАНТИКА
СЕРТИФИКАТ
КОНСТРУКЦИОННОГО
ПРОЕКТА
1993

МЭС ЧИЗ ФРИЗУРИ
ГСС БИ-ОБЛИСТЕХ
ЗУОН-АРМ-ССР
ИМ. А. МЯСНИАН
О. ИВАНОВИЧУК

59319-66

ԸՏՆԿ. ԸՏՆԿ. ԴԱՍԱՏՈՒՆԵՐԻՆ

Մեր կազմակերպչական գործունեության հիմնական խնդիրներից է այն բանը, որ հարգելի շարժարարներին, Վոր կրե էն Թուրքիայում հայ դպրոցները վերջին հինգ տարիներ ընթացքում, դասագրքերի պահպանման պարզապես փառաշուք: Քանի որ 18, 19 և 20 թվականներին հնարավոր չէր լինում կողմնակց սպանել ըստ նախնային մի դպրոցների դասագրքերը - դրա պարզապես հարգել էին, մասի և կարգի էր մի կերպ հաշտվել դրանքին մեր: Բայց երբ 21 և 22 թվականներին ևս կողմնակց մեր կողմից դասագրքերի հայթայթել, չնայած մեր բոլոր ջանքերով մասնակցներին - մեջ հնամ էր էնթարկվել դասագրքերի հրամայական պահպանել և փորձել սեփական ուղիով կազմել գույքի մեջբաժնի շեղանկները:

Անկախ այն հանգամանից, Վոր հույսին սկսած գործը հաշտվել կարողանան էն գլուխ բերել դեկտեմբերին, այն էլ բացարձակ թիրախներն են, ինչպես ընկ. ընկ. դասագրքերը կարող լինի իսկապես նկատել:

այդ բոլորը միանգամայն ապացուցում է, Վոր մեզ համար ևս ճշգրտ գործ չէր դասագրիտը կազմելն ու հրատարակելն - ինչպես մինչև հիմա ըստ էրևոյթին նաև կով-խառն: Հասկանալու մեզ համար դա ճշգրտ չէր Վոր միայն այն պարճառով, Վոր մինի բաժանանալու պար-րաստ շինի այդորինակ աշխատանքի համար, այլ նաև նրա համար, Վոր մի անգամ այդ գործը ճանարկիւայ-ցէրն մինի ստիպւած էինի - Վոր աւանդ Վորն զո-հողաթիւնի - հաղթահարել քիւնիտակն մի զարի շա-խալանի խոշոր արգելիներ, Վորոց հէտ աւհասարակ կազմած է հայկական դասագրիտի հրատարակութիւնը Թուրքիայում: Խոստովանելով դասագրիտ թերու-թիւնի, մինի հասով էի, Վոր նա այնամտնայնիվ կճաւայե այն նվազագոյն նպատակին, Վորին ըստ մեր ույծիտի հեղեղ էի: այնինչե քաւ աշակերտներին մի ժամանակավոր ճեռնարկ, Վորը ներկայիս պայ-ճանիտում թերևս զգալապես ոճանկալի մայրիտի լիզի դասավանդութանը էրկորդ և մասամբ էրրորդ բաժինիտում: Մեր աշխատանքը, ինչպես կարելի է քիւնել, կոճկելուտիվ մի գործ է: Վաչ-ճողիտը նայնպես քորճել էի քաւ մի խնի ինի-արայն և փոխադրական հողվածներ՝ զանալով

հարմարելն դասագրիտը մանավարձութան նորագոյն պահանջներին:


Հին ուղղագրութիւնից հրամարվել էի: «Ե» և «Օ» քատրը բոլորովի Վերացւած է: «Ե»-ն կարգացւած է ըստ բաւի իմաստի, Վորովհետե թէ պահանջել նախին արդասանութիւնը և թէ փոխարինել է «Ե»-ին: «Օ»-ի քիւն բաւել է. «Ո»-ն, Վորի «ՎՈ» արդասանութիւնը Վերացւած է: «Ո»-ով նիւզող բաւերը կարելի է գրել աւանդ «Վ»-ի, ուղղակի «Ո»-ով միայն այն դեպիտում, էրբ սխալ չէ արդասանել նայն. բաւերը «Օ»-ով, որինակ «ՈՏ», «ՈՐՐԱՆ», «ՈՂՈՂԵԼ» և այլն: «Լ» քաւզ պահանջել է, բայց գլխադրը գրված է «ԵՎ»: «Յ»-ն բաւի սկզբում չէ գրված. բաւի Վերջին նայնպես չէ գրված, էրբ չէ արդասանված: «Ոյ» քաւզ Վերացւած է, փոխարինը գրված է «ՈԼյ»

Դա նոր ուղղագրութան մասնակի շինի է, Վորին հեղեղում էր «Խորհրդային Հայաստան» թերթը մինչև ս.թ. հոկտեմբեր, նայտած նոր ուղղագրութան դիւրերը հրատարակված էր ս.թ. մարտ ամսին: Հոկ-տեմբերի 2-ից «Խորհրդային Հայաստանը» սկսեց

անշեղ կիրառել ուղղագրութեան գիրքերու, զորի
 մասին մեծ գիտելիսցանք միայն վերջերս, երբ գա-
 սազրի վաշեղացիք բնագիրը արդէն հանջնված էր
 վիճագրագրութեան, այնպէս զոր բնագրի վերադարձագրութիւնը
 ըստ նոր ուղղագրութեան արիւմ կանոններէ կապված
 էր նորանոր չգրգռմաներէ և խոշոր մարտիկի միջ-
 Անկախ գրանից՝ մեծ թանկ էնի գալիս մեզ կար-
 ծիլա, զոր հայկական նոր ուղղագրութեան վերջնա-
 կան մշակումը քակուելի կարող է ահագնամեծիան
 բազմախոյուններէ քննութեան, իսկ այդ հարազատ է
 միայն ապագայում, երբ փոքր և հարցի գիտական
 քննադատութեանը ցոյց կ'առ մեզ գիրքերի ուղ-
 զագրութեան թէ գրական և թէ բացասական կողմերը:
 Իսկ զոր հին ուղղագրութեան իր դարն անց է կացրել
 այդ պէտք է կանխածից դարձ համարել:

Ստորև բերում էնի նոր ուղղագրութեան արիւմ
 կանոնները ըստ Հայաստանի Ժողովուրդի Խորհրդի
 գիրքերի:

ԿԱԶՄՈՂՆԵՐ



ՏՈՐ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Ժողովուրդի Խորհրդի նոր ուղ-
 զագրութեան գիրքերը հրատարակած է «Խորհրդա-
 յին Հայաստան»-ի N 61-ում ս. թ. մարտի 18-ին:
 Սակայն թերթը հշտնաւոր շեղումներով էր կիրառում
 գիրքերը. մինչև հոկտեմբեր: Տոյն շեղումներով է
 քայտարված նաև մեր դասագիրքը: Այսպիսի փո-
 քանակ չէր գիտելու գիրքերը, զոր բազմական պեղ է
 պահանջում, ալիւն նկատարահարմար համարելիս ար-
 քայտիլ նայեալութեամբ հիշեալ թերթի N 224-ի
 առաջնորդողը նոր ուղղագրութեան մասին:

«ՏՈՐ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ»

Հ. Ս. Խ. Հ. Լուստոյնի կարգադրութեամբ
 հոկտեմբերի 2-ից սկսված է նոր ուղղագրութեան
 անբողջական կիրառումը մեր բոլոր դպրոցներում,
 գրականութեան, մամուլի և հիմնարկութեաններէ մեզ:

Ինչպէս հայտնի յի, մինչև այսօր կիրառ-
 ված էր Լուստոյնի մշակած հրահանգի առ-
 քիժանական ժամանակաւոր ուղղագրութեանը:

Մեր ճասաներին արդէն չորսը չափով է -
 րիւսիէ Ին այդ ճասանի ուրիշներն: Այժմ, յիբ
 այսորքանից անցնում էնի ամբողջականին, անհրա-
 ժելը է մի խնի կարեւոր ուղիցույցներ րաւ ընթի-
 րողներին՝ թշուրիմացութեանն էրի մեզ չընկնելու համար:

Այսպէս, մեր այբաբենից բոլորովին վերաց-
 վում էն նախկին «է» և «օ» դասերը: Այսու-
 ճիտե բոլոր այն բառերի մեզ, որ գոյութեան
 է աւելու է հնչյունը՝ պիտի գրել «ե» և այս
 դասը կոչվում է «է»: Ինչ վերաբերում է մեր
 նախկին «օ» հնչյունին՝ այսուճիտե նա գրվելու յի
 այսպէս «յե», այսինքն ճիշտ այնպէս, ինչպէս գրվ-
 վում է գերմաներէնում (jes, jeder):

«Օ» դասի վերացումով՝ նրա րիշը բանում
 է «ո» դասը, զորն այլևս չի հնչվում զորպէս
 «վո», այլ իբրև պարզ «օ», ինչպէս մինչև այ-
 սոր էլ հնչել է բառերի մեզ (կով, կարով):
 Ընդհանրապէս «վո» հնչյունն արգասայրելու
 համար միշտ պիտի է գրել այսպէս՝ «վո»:

Այնուճիտե, բոլոր այն դեպքերում, որ
 հնչվում է «եա», «եօ», «իւ» միշտ պիտի
 կիրաւել մի և պարզ գրութեան չե այն է. —

յա, յո, յու: Այսպիսով պիտի գրել կյանք,
 յոթ, յուր և այլն: Ուրիշն բառակցում «յ»
 դասը այլևս չի հնչելու զորպէս «հ», այլ սոսկ
 զորպէս ռասական ի, կամ գերմաներէն j (իոյս):
 Ինչ վերաբերում է բառակցի և բառամիջի
 «հ» հնչյունին, այդպիսին ամեն րիշ պիտի գրել
 միմիայն «հ» դասով և յիբի «յ»-ով: Բառա-
 վերջի «յ» յիբի նա չի հնչվում՝ չի գրվում:

Նախկին «ոյ» հնչյունն արգասայրելու հա-
 մար կիրաււում է պարզ և մի «ույ» չեւ:

Այնուճիտե նախկին «ի»-յաւ չեւերը
 գնում է, ասելու է, — յիբի բառը վերջա-
 նում է բաղաչայն հնչյունով, ինչպէս, որինակ.
 «գնում է», հարկաւորութեան չկա է-ից ա-
 ռազ «յ» դնել, ինչպէս շարիւրը գրում էն:
 Ընդհանրապէս «յե» գրվում է այն դեպքերում,
 յիբի նախորդ բառը վերջանում է շայնաւորով,
 որինակ. «ասելու յե», «խոսելու յե» և այլն:

Նախադասութեան և բառերի մեզ «եվ»
 հնչյունը պահպանվում է իր նախկին չեւով (կա-
 ռէի յի գրել նայնպէս և «յեվ»): Ինչ վերա-
 բերում է գլխաւորին՝ անպայման պիտի գրել «Յեվ»:

Նախկին «էութիւն», «խրիստոնէութիւն» և այլ
համանման բառերով պիտի գրէ այսպէս. «էյություն»
«քրիստոնէյություն», այսինքն յիշատակելով հո-
շոտական կանոնին՝ յիշել կիսահշտան արդասանությունը:



Կարդա

Կարդա, այ իմ խելոք մանուկ,
Կարդա - գրի տարին բոլոր.
Կարդացողի խելքն Ե կտրուկ,
Միտքը պայծառ ու լուսավոր:


Գիր կարդալով՝ դու գրքերում
Շատ նորանոր բան կիմանաս.
Շատ շատերից շատ բաներում
Մտքով հեռու կսլանաս:

Գիր կարդալով դու աշխարհիս
Կճանաչես չարն ու բարին,
Ով ե խնդում, ով ե լալիս,
Ով ե պրկում խեղճ Թշվառին:

Դու կիմանաս՝ ինչու մարդիկ
Պետք ե ապրեն իրար համար.
Ինչն ե մարդկանց ցավն ու կարիք,
Ինչ ե լույսը, ինչը խավար:

Կարգ՝, վորդիս, վոր հորդ պես
Դու ել անուս, խեղճ չմնաս,
Վոր ամենքին վիզ չծուես
Ու միշտ ապաջ առաջ գնաս:

Ինչու տգիտութեանը խավար ենք ասում, իսկ գիտութեանը՝ լույս:



Բավարի, Նգտին Գնդ Իգեցցտու Ս
Պատմեցեք, ինչ ե պատմեցեք:

Երկու եղբայր

Մի գիւղում երկու եղբայր էին ապրում: Նրանք վորք էին: Նրանցից մեկը տասը տարեկան էր, միւսը՝ տասներմեկ: Իրանց ապրուստը հայթայթելու համար եղբայրները լուցկիների արկղներ էին շինում: Երկուսն էլ սրտանց ցանկանում էին գրեւ կարդալ սովորել: Հասարակ որերը երեխաները անկարող էին դպրոց հաճախել, վորովհետեւ տանը աշխատում էին: Մնում էր կիրակի որերը սովորել: Նրանց բաղդից այդ ձմեռ գիւղից չորս վերստ հեռու մի կիրակնորեա դպրոց բացվեց: Զմեռը սաստիկ ցուրտ էր, իսկ երեխաները հորից մնացած մի վերարկու միայն ունեին: Երկուսը միասին չէին կարող դպրոց գնալ: Մտածեցին, մտածեցին և վերջը հնարը գտան: Վորոշեցին հերթով գնալ դպրոց: Մի եղբայրը փաթաթվում էր վերարկուի մեջ և դպրոց գնում, իսկ միւսը տանն էր մնում:

Մի անգամ ուսուցիչը հարցրեց

փոքր եղբորը. « ո՞ր ե քո եղբայրը. ինչո՞ւ չի եկել դպրոց»: Երեխան ամոթից կարմրեց և կմկմաց. « Մենք մի վերարկու ունենք և հերթով ենք հագնում: Այսօր դպրոց գալու հերթն իմն էր: Վերագանալով տուն, ես իմ սովորածները պատմում եմ եղբորս. Միւս կիրակի եղբայրս կգա դպրոց և ինձ կպատմի դասը»

Վորքի պահանջը

Վորք եմ անտուն, անպաշտպան,
 Տվե՛ք, խնդրեմ, ապաստան,
 Տվե՛ք սնունդ և ուզում
 Ես մարդ դառնալ եմ ուզում:
 Զեմ ցանկանում շրջել զուր,
 Անգործ ընկնել դռներդուռ,
 Զրի մուրալ ու ապրել,
 Վողորմութեան սովորել:
 Առե՛ք ձեզ մոտ վորդեգիր,
 Տվե՛ք ձեռքս արհեստ, գիր,
 Լինեմ խելոք և ապնիվ,
 Վայելեմ միշտ սեր, պատիվ:

Գիւղի գրագետը

Մայրը իր վորդուց
 Նամակ ստացավ,
 Կարոտած սիրտը
 Վեր ու վար եղավ:

Տղան ինչ եր գրել
 Պետք ե իմանար,
 Բայց իրանց տանը
 Կարգացող չկար:

Վորդին հեռու եր
 Ոտար քաղաքում,
 Ծառայում միտան,
 Դպրոցում սովորում:

Դուրս եկավ փողոց
 Մի քարի նստեց,
 Գիւղի ուսուցչի
 Վորդուն հանդիպեց...

Նայում եր թղթին՝
 Սիրուն նշաններ,
 Բայց այդ գրերի
 Միտքը չգիտեր:

Եվ նրան կանչեց՝
 -Այ սիրուն տղա,
 Մոտս եկ, ապրես,
 Այս թուղթը կարդա:

Ջանասեր մանուկը

Ջանասեր մանուկը լուսամուտի
 առաջ նստած իւր դասերն եր սովորում, իսկ
 փայլուն արեւը նրան դուրս եր հրավիրում
 ասելով.

-Սիրուն երեխա՛, բավական չե՞ կարդաս,
 դուրս արի, մի քիչ ել խաղա:

-Վո՛չ, պայծառ արեւ, ես դեռ չեմ կարող
 խաղալ, պետք ե դասերս պատրաստեմ:

Բ.

Մանուկը կարդում ու գրում եր,
 հանկարծ մի փոքրիկ թռչնակ թռթռա-
 լով եկավ, լուսամուտի առաջ նստեց և
 ծլվլալով ասաց.

-Սիրուն երեխա՛ հերիք ե վորքան գրեցիր,
 դուրս արի խաղա, ուրախացիր:

-Վո՛չ, սիրուն թռչնակ - պատասխանեց
 մանուկը - ես դեռ չեմ կարող խաղալ.
 պետք ե դասերս լավ պատրաստեմ:

Գ.

Մանուկը շարունակում եր գրել
 ու կարդալ, իսկ պարտիպից կարմիր կե-
 ոասը կարծես ասու՛ էր նրան.

-Սիրուն մանկիկ, բավական չե՞ աշխա-
 տես, դուրս արի, հասած պտուղներս կեր,
 կշտացիր:

Իսկ մանուկը մտածում եր

« ինչ ախորժակով կեռաս ուտեմ, քանի վոր դասերս չեմ սովորել »:

Դ.

Մանուկը գործը վերջացրեց, գրքերը հավաքեց, ուրախ - ուրախ դուրս վա-
լեց և համարձակ կանչեց.

— Այն ո՞վ եր ինձ հրավիրում, եկե՛ք, ես պատրաստ եմ:

Այժմ արևը նրա համար ավելի պայծառ եր փայլում, թռչնակն ավելի քաղցր եր երգում, իսկ կեռասը նրան անչափ համեղ եր թվում:



Վեց կաց

Վեր կաց մանուկ խորունկ քնից

Արևն արդեն ծագել է.

Վեր կաց փափուկ քո անկողնից

Հավը վաղուց խոսել է:

Վեր կաց, նայիր պատուհանից

Դեպի հեռու մեր դաշտեր...

Տես, թե ինչպես մեղմ վեփուռից

Որորվում են լիք հասկեր:

Դեհ, շուտ վեր կաց, ել մի՛ քնիր

Ծույլ ու անհոգ անկողնում.

Ա՛ռ գրքերդ, դպրոց դիմիր,

Վոր տեղ գտնես դու կեանքում:

—

Շենքեր՝ տուն, խրճիթ, գոմ...

— 0 —


Անձնվեր շունը

Ձկնորսը մի շատ խելոք, անձնվեր ու հավատարիմ շուն ուներ: Մի անգամ այդ ձկնորսը իւր ընկերներով մեծ վտանգի մեջ ընկավ:

Նրանք նավակով վերագառնում են ծուկ վոր-
 սալուց, բայց դեռ ափին չհասած խիստ փոթո-
 րիկ բարձրացավ: Ծովը սաստիկ ալեկոծվեց և այդ
 պատճառով նավակը չէր կարողանում մոտենալ
 ափին: Ծովափին կանգնած մարդիկ ցավելով
 նայում են նրանց, բայց չեն կարողանում ոգ-
 նութեան հասնել: Ծունն իր խելոք աչքերով եր-
 կար նայում էր այդ մարդկանց՝ սպասելով, թե
 երևի նրանք մի բան կանեն: Բայց տեսնելով,
 վոր մարդիկ վոչինչ չեն անում, նա նետվեց ջու-
 րը և լող տալով գնաց դեպի նավակը: Ձկնոր-
 սները՝ կարծելով, թե շունն ուզում է իրանց
 մոտենալ, կանչեցին նրան. բայց շունը չմոտե-
 ցավ նավակին, այլ մի փոքր տարածութիւն հե-
 տեւելով նրան՝ կարծեք ինչ վոր բան էր պահան-
 ջում իր տարորինակ հաջոցով: Վերջապես մի
 ձկնորս՝ գուշակելով բանի եութիւնը՝ ասաց
 ընկերին. « Թոկի ծայրը նետիր դեպի շունը »:
 Ընկերն այդպես էլ արավ: Ծունը իսկույն ա-
 տամներով բռնեց թոկի ծայրը և լող տալով վե-
 րագարծավ ափը: Մի քանի րոպեից հետո չոր-
 քոտանի բարեկամի անձնվիրութեան և հասկա-

ցողութեան շնորհիվ թե նավակը և թե ձկնորս-
 ները փրկված են անխուսափելի կորստից:

Թվիր ընտանի կենդանիների անունները:



Գիւղի դպրոցում

Ձմրան դեմ տրտում	Այստեղ կան խաղեր
Դաշտն է մերկանում,	Ուրախ խնդութեան:
Գիւղի դպրոցում	Ամպերն են իջնում,
Ձայներ են հնչվում.	Դաշտերը մթնում,
Եկեք մանուկներ	Մանկանց ծայներն են
Մեր ապաստարան,	Դպրոցում հնչվում:

Անտառի տեղը աշնան վերջին ինչպես է լինում:



Պժգոհութիւն

- Պեր եկր, խոպուկ:
- Դարևանի բակում:
- Դոյ, ինչ կար:
- Վոչնչից վոչինչ. կարգ կանոնն չկար. բակն ավլած էր, ամեն փոռ մաքուր, նույնիսկ աղբամուղն էլ չգրա:

Առած. Գողն ինչ կուզի՝ մութ գիշեր:

- 0 -

Պարտիզպանի կտակը

Մի ծերունի պարտիզպան շատ անգամ ասում էր վորդոցը, վոր ջանասեր լինեն, բայց վորդիքը ծուլլ են և ականջ չեն

գնում: Երբ ծերունին չգաց, վոր մահը մոտ է, կանչեց վորդոցն ու ասաց.

- Սիրելի վավակներս, իմ ունեցած - չունեցածս այս տունն ու պարտեղն է, ուրիշ բան չունիմ, վոր ձեզ թողնեմ: Բայց պարտիզումս գանձ կա թաղած՝ իմ պապիցս ու հորիցս մնացած. եթե լավ փորեք, փորփրեք, անշուշտ կգտնեք:

Ծերունու մահից հետո վորդիքը սկսե-

ցին փորփրել պարտեղը: Փորեցին, փորփրեցին, վոչինչ չգտան, բայց հետևեալ տարին ծառերն այնքան պտուղ տվին, այնպես առատ, վոր երբեք տված չեն: Այդ ժամանակ միայն տղերքը հասկացան, թե ինչ գանձ էր պապերի թողածը: Այնուհետև սկսեցին աշխատութիւնը սիրել և աշխատութեամբ ապահով ապրելու հնարքը գտան:

- 0 -

Պաղատու ծառեր. - Տանձի, խնձորի, բալենի, սալորենի, կեռասենի...

- 0 - 0 -

ԱՇՆԱՆԸ

Ամառը վերջանալուն պես ծառերի կանաչ տերևներն սկսում են փոքր առ փոքր դեղնել, թառամել. գերանդին ու մանգաղը իրանց գործը վերջացնում են արտերում. սարերի և հովիտների կանաչ ծածկոցները չորանում են. ծառերի և թփերի հասած պտուղները քաղվում: Աշնան նշաններն ամեն կողմից մարդու աչքին են դիպչում: Ահա այստեղ, հնձած արտերի տեղ, դեղին ծղոտներ են երևում միայն. այնտեղ, այգիներում, պտուղներից մերկացած ծառերն են տխրութեամբ շարժում իրանց գլուխները և պատրաստվում ճմեռվա քունը մտնելու: Կալերում արագ-արագ կալսում են հնձած հացաբույսերը:

Քանի գնում որերն չգալի կերպով կարճանում են, արեգակն արդեն կորցնում է իւր զորութիւնը. երկինքն հասի ծածկվում է մոխրագոյն ամպերով և բարակ անձրևը մաղվում է վերևից:

ԱՇՆԱՆ



Զվող թռչունները շարան - շարան հեռա - նում են դեպի տաք երկիրներ: Դպրոցնե - րում, ամառվա արձակուրդներից հետո, ուսումն և սկսվում:

Չուղ թռչուններ՝ ծիծեռնակ, արագիլ, սո - րակ, սարեակ...

Առնան երգերից

Առնան բքաբեր քամին և փչում
Ցուրտ ու սարսուռը առած թևերին,
Մաղկանցը թափուն մահ և շշնջում
Եվ ուժգին թափով տատանում ուռին:

Ամպերն են լալիս, թափում արցունքներ
Եվ ժանտ քամին և վայում մեր գլխին.
Քնքույշ ծաղիկներ, դեղնած տերևներ
Մահվան երգերով թափվում են գետնին:

Գայլի արքայաուխ

Գայլը լուր ասաց, վոր հով - վի ամբողջ հոյրը փչացել է: Եկավ հովվի մոտ և արքայաուխ աչքերն ասաց.

— Դեղձում եմ ֆեյ, ով բարի մարդ: Կովիվը կայեց գայլի արքայաու - ֆին և ասաց.

— Ընտրեալիս եմ ֆեյաւնից, հա - րեան: Բայց ամոթ չիւնի կարգնել՝ ինչի՞ տա աղի արքայաուխ թափում. արդեոք ինչ կողմաւնց, թե՛ Կրա համար, վոր այլևս թոյնելոյս բան չես ունենա.

59-51665



БИБЛИОТЕКА
ИМ. А. МЯСНИКОВА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академия Наук
СССР

ՀԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ԳՍԸ ԲԻԲԼԻՈՏԵԿԱ
ՀԱՍՏ-ԱՐՄ. ՍՍՐ
ԻՄ. Ա. ՄԱՏՆԻԿՈՎԻ
Ս. ՍՅՈՒՆԻ ԿՆՅՈՒՆ ԵՎ ՍՅՈՒՆԻ



Արջն ու գայլը


Գայլը մի գառը հափշտակած տա-
նում եր, վոր լափի: Արջը հանդիպեց նրան
ու տեղնուտեղը խլեց գառը գայլից.

Գայլը մի կողմ քաշվեց և սկսեց աղի-
ողորմ ունալ ու կոնձկոնձալ դեպի երկինք
նայելով:

- Այդ ինչ էս աղաղակում, հարցրեց արջը
Գայլը պատասխանեց.


- Ես դեպի երկինք եմ աղաղակում և ասում,
վոր ուժեղները թույլերից վոչ վախում են և
վոչ ամաչում, այս ինչ որ ենք ե.

- Եթե լավ որ ենք չե, հապա ինչո՞ւ հափըշ-
տակեցիր գառը, ասաց արջը:



Տերևները

- Մենք ծառերի վարդն ու վարդարանքն ենք,
ասացին տերևները. առանց մեզ ինչի՞ նման
կլինեն ծառերը. մենք սիրուն ենք. մեր ստվե-
րի մեջ մարդիկ, կենդանիները հանգիստ են առ-
նում, մեր ստվերի մեջ ամեն թռչուն իր բունն
ե շինում, ուրախ երգում: Մենք ենք ծառե-



րին կեանք տվողը, վար-
դըն ու վարդարանքը:

x x

- Ինչ ել վոր ասեք,
իրավունք ունիք, ասա-
ցին արմատները. մենք
ձեզ խնդրում ենք մի
քիչ ցածրացեք, քիչ
ներքև նայեցեք և դուք

կտեսնեք, թե մենք ինչ բան ենք, ձեզ ինչ ենք
տալիս: Աշնան վերջերին դուք ել կթափվեք,
ձեզանից հետո եկող տերևներին ելի կեանք կը-
տանք, ելի կպահենք և այսպես շատ-շատ տա-
րիներ: Հիմա ել կասեք, վոր միայն դուք եք
վարդ ու վարդարանք ու կեանք տվողը:

Ծառերի մասերը .

Արմատ, բուն, ճիւղեր, տերևներ, ծաղիկ, պտուղ :



ՄԱՅՐԸ

Սենեակի միջին
Կանթեղն ե ցոլում,
Գալապած քամին
Դուանն ե սուլում

Անքուն մայրիկը
Ընկած զույգ ծնկան
Որոր ե ասում
Իր սիրուն մանկան

- Ծճ, ճերիք, ճերիք,
Քամի ու մրրիկ .
Հանգիստ, չինարներ,
Քամու քնարներ :

Ախ, դուք լսեցեք,
Մայրն ե գեղգեղում .
Թողեք մանկիկս
Ննջի իր տեղում :

Ել մի վորոտա,
Դու ահեղ վորոտ,
Իմ անուշ բալեն
Քնի ե կարոտ :

Հեռացեք, ամպեր,
Ամպեր բքածին,
Հանգիստ քուն տվեք
Սրտիս սիրածին :

Քնիր, բալիկս,
Նանիկով քո մոր .
Քամի ո վորոտ
Կլանն, որոր :

Վաղը կտեսնեն
Աչերդ կրկին
Եվ սեր, և գգվանք,
Եվ պայծառ երկին :

Առած. Վորդին վոր բունումը ձվածեղ
եփի, մոր լավութիւնիցը չի պրծնի :

Ահրեւի մայրիկ .

Ես այսպէս այնքան ուրախ
եմ, այնքան բաղդաւ վոր : Ես չեմ ու
յում հետաւնալ գիւղից : Եւնդրում
եմ ինչ թույլ ցասա մի քանի որ եմ
մնալ բարի տատիկիս մոտ : Պու
եղ արի գիւղ, սիրեւի մայրիկ : Քեզ
սասարիկ կարոտեղ եմ : Կամբուրում
եմ քեզ և կայրիկին :

Քո Աննիկ



Պառավն ու այծը

Կար-չըկար երբեմն
Մի աղքատ պառվիկ.
Ուներ մեր պառավը
Կաթնատու այծիկ.
Չալիկ մալիկ
Կաթնատու այծիկ

Պառավը ձմեռը
Այծիկը պահեց,
Իր բերնի պատառը
Նրա հետ կիսեց
Սիրով հոժար
Նրա հետ կիսեց:

Երբ ձիւնը հալվեցավ,
Բսավ կանաչ խոտ
Պառավն այծիկը
Դուրս տարավ արոտ.
Ուրախ զվարթ
Դուրս տարավ արոտ:



Թանձր մառախուղ
Գետինը պատեց
Պառավի աչքիցը
Այծիկը կորցրեց.
Ափսոս, ափսոս
Այծիկը կորցրեց:

Պառավը արտաավեց
Իսկ գայլը ունաց.
Այծիկը մոլորված
Բարձր մկրկաց...
Տխուր փրտում
Այծը մկրկաց:



Գայլը մոտեցավ,
Այծին շալակեց.
Պառավը հետևից
Բարձրաձայն գոչեց.
«Հայ, հայ, վայ, վայ»
Բարձրաձայն գոչեց:

Խեղճը մնաց կանգնած
Մի փունջ խոտ ձեռին
Անմխիթար ձայնով
Կանչում էր այծին.
Եկ, եկ, եկ, եկ
Կանչում էր այծին:



Կաշաղակ

Այ կաշաղակ, կաշաղակ
Սիրուն թռչնակ, սարսարակ,
ինչ ես ընկել գունե-դուռ,
Բակ ու պարտեզ ու կտուր.
Եվ մտքումդ եդ ինչ կա:

Քանի ճըչաս,

Կըչ-կըչաս

- Զըկա՛ - չըկա՛...

Զըկա՛ - չըկա՛...

Մեկ ել հանկարծ վայրացած,
Ավելի խիստ, անհանգիստ,
Սրկար պոչդ շարժելով,
Բաց ես անում կտուցդ
Եվ վրդովված հոգուցդ

Ձայն ես տալի

Վշտալի

- Զըկա՛ - չե՛, չե՛

Զըկա՛ - չե՛, չե՛...

Երկու խոփ


Միևնույն երկաթից և միևնույն ար-
հեստանոցում շինված եին երկու խոփ: Դրան-
ցից մեկը գնեց մի երկրագործ և սկսեց գործ-
ածել, իսկ միևսը երկար ժամանակ թուրո՞վին
անոգուտ ընկած եր վաճառականի խանու-
թում: Մի քանի ժամանակից հետո երկու ըն-
կերներն նորից պատահեցին իրար:

Սրկրագործի մոտ եղած խոփը արժա-
թի պես պսպղում եր և առաջվանից ավելի
գեղեցկացել եր, իսկ միևսը սևացել եր ու ժան-
գոտել:

- Ասա, խնդրեմ, հարցրեց ժանգոտած
խոփը իւր ընկերին. - այդ ինչիցն ե, վոր դու
այդպես փայլում-ես, իսկ ես այսպես սևա-
ցել եմ ու ժանգոտել:

- Աշխատելուց, սիրելիս, պատասխանեց
միևսը. իսկ դու վոր ժանգոտել և առաջվանից
ավելի վատացել ես, այդ ել նրանից ե, վոր այս-
քան ժամանակ կողքիդ ընկած վոչինչ չես արել:

ԳՈՐԾԻՔՆԵՐ. արոյ, գութան, գերանգի, մանգալ...



Աբլորն ու մարգարիտը

Արվան մեկը մի աբլոր
 Քջուջ մջուջ անելիս՝
 Տեսավ մի հատ մարգարիտ
 Աղբի միջին փայլելիս:
 Կտցեց, ասավ. « Ես ինչ ե.
 Ինձ հարցընես՝ վոչինչ ե:
 Այ՛ վայը տամ են մարդին
 Վոր գին կտա ես վատին:
 Իսկ ինձ համար մի գարին
 Արժեր եսպես հավարին»:

Արհեստա իմացողը քաղցած չի մնա

Մի գիւղում դարբինն աշխատում էր

դարբնոցում, և երիտասարդ վաճառականը
հաճախ գալիս էր ու ժամերով նայում նը-
րա աշխատանքին:

« Սովորեցեք գոնե փոքրիկ մեխեր չի-
 նել, մի անգամ ասաց նրան դարբինը. —
 ո՞վ գիտե, կարող ե դա ձեզ վորեվե ժամա-
 նակ ոգտակար լինել: Երիտասարդ վաճա-
 ռականը քմծիծաղ տվեց. քայց անգործու-
 թիւնից կանգնեց վնդանի առաջ և շուտով
 սկսեց պատրաստել կոշկի գեղեցիկ մեխեր:
 անցավ չորս տարի և երիտասարդ վաճառա-
 կանի հայրը վախճանվեց: Երիտասարդը չգի-
 տեր ինչպես իւր համար մի կտոր հաց աշխա-
 տի, վոչինչ չէր կարողանում անել: Գործ
 փնտռելիս մի անգամ ընկավ մի գիւղ, ուր
 բավական կոշկակարներ կային. նրանք կոշկի
 մեխերը գնում էին քաղաքից, վորտեղ գնալը
 նրանց համար դժվար էր: Այդտեղ երիտա-
 սարդը հիշեց, վոր մի անգամ նա սովորել
 էր կոշկի փոքրիկ մեխեր չինել. նա գործի
 անցավ ու սկսեց մեխեր պատրաստել, իսկ
 կոշկակարները իրանց հարկավոր մեխերը

սկսեցին գնել նրանից: Սվ այդպես մեր սրի տասարդը մինչև վերջը ապրեց խաղաղ ու առանց կարիքի:

Առաժ. փեշակը վուկի Ե:

Արհեստավորներ՝ կոշկակար, հիւսն, դարբին, գերձակ, վուկերիչ...

Ով Ե կուշի

Կունսի աղխարն աւայ. Ես կուշի, ուրախ կլինեի, եթէ ջնուներ ունենայի:

Ձեռքապինդ աղխարն աւայ. - Ես կուշի, ուրախ կլինեի, եթէ մանկութիւնս աշխատել սովորեի:

Հարստութիւն

Մի չքավոր երիտասարդ հանդիպեց իւր նախկին ուսուցչին և սկսել շատ գան - գատվել իւր դառն վիճակի ու անաջողու -

թիւնների վրա: Մի ժամանակ նա եղած Եր ուսուցչարանի ամենալավ աշակերտը և իրանից ավելի վատ ուսանողներն այժմ լավ անվան ու հարստութեան տեր են, այն ինչ ինքն անց Ե կացնում թշվառ կեանք:

- Միթե ասածիդ չափ աղքատ ես դու, հարցրեց ուսուցիչը. դու ինչպես տեսնում եմ, առողջ ես: Այդ ձեռքը, շարունակեց ուսուցիչը, բռնելով իւր աշակերտի աջը - ու ժեղ Ե և կարող Ե գործել Թույլ կտայիր ա գեղք վոր կտրեն դրան հազար մանեթով:

- Վոչ երբեք, և վոչ տասը հազարով:

- Իսկ վորքանով կտայիր քո սրառես աչ քերը, վոր տեսնում են լույս աշխարհը, - քո սուր ականջները, քո արագաշարժ վոսները կարծես դու չեիր փոխիլ դրանց ամբողջ աշխարհի հարստութեան հետ:

- Իհարկե, վոչ, պատասխանեց երիտասարդ:

- Ուրեմն, ինչպես ես գանգառվում քո աղքատութեան վրա, երբ վոր ունիս այդպիսի մեծ հարստութիւն, - նկատեց ուսուցիչը:

Առաժ. Սառցութունը ամենից թանգն Ե:

Պատվասեր աղքատը

Մի հարուստ մարդ աղքատների համար շուտ շուտ սեղան եր պատրաստում և կերակրում նրանց: Աղքատները գալիս են նրա մոտ և առանց քաշվելու ուտում խմում են, վորքան կարող են: Մի անգամ հարուստը դաշտով անցնելիս նկատեց, վոր մի ծերունի ցախ եր հավաքում այս ու այն կողմից, վոր տանի խրճիթը տաքացնի:

Հարուստն ասաց աղքատին.

- Պապի, միթե չգիտես, վոր այսոր ես աղքատների համար ճաշ եմ պատրաստել: Գնա մեր տուն. քեզ այնտեղ լավ կկերակրեն, կուշտ կուտես, կխմես և դեռ փող ել կստանաս:

- Ինչպես չե, վորդիս, գիտեմ, վոր դու այսոր սեղան ես բացել. միայն թե՛ ես ուրիշի հացն ուտողը չեմ, քանի դեռ ուժերս տեղն են:

Առաժ. Հացն ուտելով, բանն անելով:

Շունն ու կատուն

1

Ժամանակով կատուն ճոն եր, Շունն ել գլխին գդակ չուներ. Միայն գիտեմ՝ վոչ վորդիանց վորդի ձանկել եր մի գառան մորթի: Եկավ մի որ ձմեռնամըտին կատվի կուշտը տարավ մորթին: - Բարի աջողում, ուստա Փխո, Գլուխս մրսեց, ի սերն ասժո, Այն ես մորթին ու ինձ համար Մի գդակ կարի գլխիս հարմար: Վարձիդ համար միամիտ մնա, Համա - համա շատ չուշանա: - Աչքիս վրա, քեռի Բուչի, Մի գդակ ա, հո մի քուրք չի. Բու թանգագին խաթեր համար Ուրբաթ որը համեցեք տար: Փողի մասին՝ ավելորդ ա, Մեր մեջ խոսելն ել ամոթ ա. Ինչ մեծ բան ե, տո, հեր որհնած, Միայն, միայն մի գդակի վարձ:

Ուրբաթ որը քեռի քուչին,
 Յրտից սառած բաց բաց կուճին
 Թափ-Թափ տալով ծանր ու մեծ
 Ուստա կատվի շեմքում կանգնեց,
 Բարձր հաչեց.

- Ուստեն ուր ա... փափախս ուր ա
 - Մի քիչ կացի, հրես կերևա, -
 Պատասխանեց կատվի ձագր,
 Վոր մտել եր պատի ծակը:

2

Ուստեն եկավ քուրքը հագին,
 Շասը տեսավ... բեղի տակին
 Իրան-իրան քիչ փնթփնթաց
 Ու մուշտարու վրա թնդաց.
 - Ցուրտը տարձավ... վահ տնաջեն,
 Քես թող անում մի շունչ քաշեմ:
 Հեշտ բան հո չի², դեռ հիմիկս եմ
 Ցրցամ տվել, վոր ըսկսեմ:
 - Դե, հեր որհնած, ըտենց ասա,
 Բարկանալդ ել ինչիս ա:
 Փող եմ տվել վախտին կարի,
 Թե չե, ասա եգուց արի.

Համ առում ես, համ չես կարում,
 Համ բարկանում, վրաս գողում,
 Համ-համ, համ-համ
 Քանի², ախպեր, գնամ ու գամ...
 Ասավ շունը ու նեղացած
 Վերադարձավ գլուխը բաց:

3

Մին ել եկավ, դարձեալ չկար.
 Այս անգամը դիպան իրար:
 Ել անպատիւ, անկարգ խոսքեր,
 Ել հին ու նոր, ել հերն ու մեր,
 Ել գող կատու, ել քաջալ շուն -
 Բանը հասավ դիվանբաշուն:
 Շունը մինչև գնաց եկավ,
 Ուստա կատուն կոտրն ընկավ.
 Գլուխն առավ ու մի գիշեր
 Հայդե, կորավ... են կորչիլն եր...

4

Են որվանից մինչև որս ել
 Շունն ես բանը չի մոռացել.

Նա մտքումը դեռ պահում ա,
 Վորտեղ կատվին պատահում ա,
 Վեր ա թռչում, վրա վազում,
 Իրա մորթին ետ ա ուզում:
 Իսկ սևերես կատուն հանկարծ



Ստ ա դառնում ու բարկացած
 Թքախառը փշտացնում ա
 Շան մոռթը թացացնում ա՝
 Միթամ թե՛ տես, հենց հիմիկս եմ
 Ցրցամ տվել, վոր ըսկսեմ...

Հետաքրքիր

- Բարի եկար, հազար բարի, բարեկամ, ուր
 եիր տեսնամ:
- Թանգարանիցն ե գալս, չորս ժամ եղավ
 ման գալս. ամեն կողմ պտտեցի, պրպտեցի,
 բոլորը տեսա, վոչինչ չթողի: Աշխարհումս
 ինչ ասես, վոր չեն եղել. վոր կողմը նախա՝
 արմանք, վարմանք, հրաշալիք. վորն ել ի-
 տես՝ մեկը միւսից գեղեցիկ: Ինչ գազաններ,
 ինչ թռչուններ, թիթեռնիկներ, բզեզներ, ինչ
 վատիկներ, ինչ կերպ ճանձեր, վորքան վոսկի
 եզնակներ. վորը կանաչ վմրուխտի պես, վորը
 կարմիր բուստի պես. հապա մանրիկ բուսուտ-
 ները - հավատա, գնդասեղի գլխիցն ել շատ
 փոքրը կա:
- Հապա փղին ինչ ասիր. ինչ ասագին, վիթ-
 խարի: Անշուշտ այնպես կարծեցիր, թե մեկ
 լեռն ե սոսկալի:
- Միթե փիղն այնտեղ եր:
- Իհարկե, միթե չտեսար:
- Ափսոս, այդ ինչպես ե եղել, վոր փիղն
 աչքովս չի ընկել:

Այսուամի կաւր

Գաւր որակաւն յի չու եր
 ածու՛ պառաւի կաւմար: Զայց
 պառաւն ագահ եր. նա յարա -
 ծեց. „ եթէ կաւիս շար կուր
 քան՛, նա յի չից ամէլի կրա:“
 Եվ սկսեց կուր շար քաւ, վորից
 կաւր շար գիրացաւ և չից
 կրովեց:

Ընտանի Թռչուններ, հաւ, բագ, սագ ...


Սագիկ

Սագիկ ճագիկ
 Իմ սիրունիկ
 Ես քեզ կտամ
 Բազցր կուտիկ,

Վորդու ուտես,
 Եոտ յեծանաս,
 Աւրախ ապրես,
 Զվարճանաս:

Երբ յեծանաս
 Մեծ սագ դառնաս
 Ես կիսնդրեմ
 Իմ յայրիկին,

Վորնա ժողվե
 Բո փետուրներ
 Եվ ինձ հաճար
 Եինե բարձեր



ՍԱԳ

Ջմեռ

Աշնան վերջին քամին եկավ,
 Սրբեց դաշտեր, ձոր ու լեռ
 Ու ամենքին համբավ բերավ,
 Թե գալիս ե ցուրտ ձմեռ:

Ու մուսյլեց երկինք, գետին,
 Մեզը պատեց դաշտ ու սար.
 Ցուրտը եկավ տիրեց երկրին,
 Ճերմակ հագավ մեր աշխարհ:

Մարդ, անասուն ծերուկ հիւրից
 Վախվիսելով մտան տուն.
 Գետն ել լռեց ցրտի ահից.
 Այն, հեռու ե դեռ գարուն:



Կենդանիների բնակարանները ձմեռ ժամանակ

Ջմեռը գալիս ե թե չե, դաշտերն ու անտառները դատարկվում, մերկ անապատի կերպարանք են ընդունում: Գեղեցիկ երգող թռչունները թողնում են իրանց բները և հեռանում դեպի տաք երկիրներ, զրկելով մեզ իրանց քաղցր երգերից: Մեզ հետ ձմերելու են մնում միայն ագռավները, կաչաղակներն ու ճնճուկները, բայց նրանք ել մոտենում են մարդկանց բնակարաններին: Գազանները թեև չեն փախչում ձմեռվա երեսից, սակայն նրանք քաշվում մտնում են իրանց վորջերն ու բները: Արջը և վուլնին սաստիկ ցրտից թմրում, ննջում են մինչև գարնան սկիզբը: Խորամանկ աղվեսն ու քաղցած գայլը դես ու դեն են ընկնում մի բան ծարելու, իսկ մոխրագույն նապաստակը ցատկոտելով ե տաքանում: Հնտանի կենդանիները, իհարկե, ցրտից կկոտորվեն ձմեռը, եթե մարդիկ նրանց համար տաք գոմեր և հարմար կերակուր չպատրաստեն, նրանց հոգսը չքաշեն:

Ինչպես են ապրում ձմեռը ոճը, գորտը, խլեպը...

Տատիկը

Տատիկ, ինչիցն է, վոր քո մազերն այդպես սպիտակ են:

- Զմեռն է, տղաս, տարիների ձիւնն է այդ:

- Տատիկ, ինչիցն է, վոր ճակտիդ վրա խոր ակոսներ կան:

- Վիշտն է փորել բոլոր այս ակոսները:

- Տատիկ, ո՞վ է քո գլուխը այդպես շարժում:

- Դա մի հով է, վոր երկնքիցն է գալիս.

մահս մոտ է, թռուհիկս:

- Ինչիցն է, վոր քո աչքերը պղտորվել են, տատիկ

- Շատ դառն արցունք թափելուցն է:

- Ինչի՞ համար այդպես ցած, կռացած ես պահում քո ճակատը:

- Վոր լավ նշմարեմ այն հողը, ուր իմ վոսկոռներն են շուտով հանգստանալու:

- Եվ ինչ ես մրմնջում միշտ, սիրելի տատիկ, երբ թռուհիկդ քեզ գրկում է

- Քեզ նոր կեանքի բարի լույս, իմ անպին:

Առած. Ծերանաս, ժերի պատիվն իմանաս:

Նոր տարվա նվերը

Ծերուկ պապին

Են հին տարին

Գործը պրծած

Անցավ գնաց:

Նրա ետքից

Իջավ սարից

Ես նոր տարին

Նվերն ուսին:

- Այ՛ նոր տարի,

Գալդ բարի,

Դու մեզ նվեր

Ինչ ես բերել:

Արդեոք խնձոր,

Ջիր ու սալոր,

Թե՞ տանձ ու նուռ

Չամիչ մի բուռ...

- Զան մանուկներ,

Թող ձեզ մրգեր

Մայրիկը տա,

Ինձ մոտ չկա:

Ես ձեզ համար

Մի մի համար

Գիրք եմ բերել,

Մեջը պատկեր:

Սրա նման

Ուրիշ մի բան

Ես չգտա

Իբրև ընծա:

Գիրքն է տալի

Մտքեր բարի,

Ծրգ, ցնժութիւն,

Խաղեր սիրուն...

Առած. գիրք՝ մեջը քաղցր միրք:

Զմեռը

Զմրան երկիւղից գետը քար կտրեց
 Քչքչան արուն լռեց, պապանձվեց .
 Ռալար բույսերը սառան, փետացան,
 Նախշուն թռչուններ թռան հեռացան .
 Բայց ելի շատին իւր ճանկը գցեց,
 Բուք-բորան արավ բուլորին խնդրեց,
 Սիրուն վարդենու թուփը չորցրեց,
 Սոխակի լեզուն տակիցը կտրեց :
 Զրաղաց չկա, ջուրը սառել է,
 Ճանապարհ չկա, ձիւնը կապել է :
 Թե մարդ, թե տավար միակերպ քաղցած
 Վողբում, լալիս են մահվան դուռն ընկած :

- 0 -

ՀԱՆՏԵԼՈՒԿ


Են եմ մի վերմակ

Փափուկ ու ճերմակ

Սառնիկ ընդարձակ


Թե տաքացնում եմ և թե մրսացնում

Դերձակներին ել չեմ հարստացնում



Դարբին

Կռանը ձեռքին, անդանն առաջին
 Քիթ-երես մրոտ դարբնոցի միջին
 Կաշվե գոգնոցը առաջը կապած
 Կռիկ կանգնած է մեր Խեչո ամին:
 Փուքսը «փուհ - հա - փուհ» փչում է, փչում,
 Կայծեր ու մոխիր դես ու դեն փռում,
 Երկաթի մի շերտ հնոցը կոխած,
 Սաստիկ տաքիցը վառվում, կարմրում:



Խաչոն հանում է երկաթի շերտը,
 Զնդանի վրա կռանով ծեծում,
 Ծինում նրանից պայտ, մեխ ու կացին
 Եվ իսկոյն ջրի տաշտակը կոխում:
 Թշշում է երկաթը ցուրտ ջրի միջին,
 Ամպի պես փռվում տաք-տաք գոլորշին,
 Կրկին անդանում, կրկին փափկանում
 Մինչև պատրաստված շպրտվում գետնին:

Հանքեր երկաթ, պղինձ, վուկի, արծաթ,
 աղ, նաֆթ, քարածուխ...

--- 0 ---

Ծուլը

Ծուլի մեկը գնաց խառնվեց բանվոր-
 ների հետ: Տեսնողը կարծում էր, թե նա էլ
 բանվոր է: Ճաշին ամենքն էլ նստեցին սե-
 ղանի շուրջ, իսկ սեղանի վրա իւղալի փլավը
 վաղորոք դրած էր մի մեծ սինիով: Բան-
 վորներից մեկը հարցրեց.

— Եսքան փլավը ո՞վ կուտի:

— Ես, ասաց ծուլը:

Հետո բերին մի մեծ կաթսա լիքը

քիւֆթա:

— Հապա ես քիւֆթան ո՞վ կուտի,
 հարցնում է բանվորը:

— Ես, բղավում է ծուլը:

Բանվորն ճաշից հետո ասացին.

— Հիմա գնում ենք քար քաշելու, ով
 է գալիս:

- Ես չեմ գալիս, ասաց ծուլը: Ես առանց
այն ել երկու գործ արեցի, երրորդն ուժե-
րիցս վեր ե:

Բանվորները ծուլին դուրս վանդե-
ցին իրանց շարքերից:

Առաժ ով ալարի՝ վոչ Դալարի:

Ուտելիք և խմելիք՝
հաց, պանիր, հարիսա, գաթա, կաթ, գինի, ջուր...

Գայլն ու Շուկը

Մի նիհար գայլ գիւղի մոտով անցնե-
լիս պատահեց մի չաղ շան:

Գայլը հարցրեց շանը.

- Ասա ինձ, շուն եղբայր, կերակուրդ վոր-
տեղից ես գտնում:

- Մարդրդ են տալիս, պատասխանեց
շունը.

- Երևի ձեր աշխատանքը բավական

ծանր է, հարցրեց գայլը:

- Վոչ, մեր աշխատանքը ծանր չե. գի-
շերները մեր տիրոջ տունն ենք պահ-
պանում: Այդ է միայն մեր գործը,
պատասխանեց շունը:

- Միթե միայն դրա համար են ձեզ
կերակրում, ասաց գայլը: Զի՞ լինի, վոր
ես ել գամ ձեզ մոտ ծառայելու, թե
չե անտառում փորս միշտ սոված ե
մնում:

- Շատ լավ, արի դու ել ծառայիր, մեր
տերը քեզ ել կկերակրի:

Գայլը ուրախացավ և վճռեց
շան հետ մեկտեղ ծառայել մարդկանց:
Բայց հենց վոր բակը մտավ՝ նկատեց,
վոր շան վզի բուրդը թափված է, կա-
շին ել քերված:

- Ինչո՞ւ ե վիզդ այդպես մաշված,
շուն եղբայր, ուզեց իմանալ գայլը:

- Եհ, այնպես, - կմկմաց շունը:

- Ինչպես թե այնպես:

- Այնպես, ելի: Երեկոները ինձ կապում

են: Շղթայից վիպս մի քիչ քերվել է, բա.
ցատրեց շունը:


— Ահա թե ինչ. ուրեմն մնաս բարև,
շուն եղբայր: Ես չեմ ուզում ծառայել
մարդկանց: Թող քեզ նման չաղ չլինեմ,
միայն թե ազատ լինեմ:



Գերի թռչնակը

Իմ տիկինը կերակրում է
ինձ նշերով, շաքարով,
իմ վանդակը պարդարում է
Իւր քնքուշիկ ձեռքերով:

Բայց գեթ մի ժամ ուրախ լինել
Ես չեմ կարող իմ կեանքում,
Երբ հիշում եմ, թե գերի եմ
Փակված այս նեղ վանդակում:



ԳԱՐՈՒՆ

Գարուն

Զուգվել են կրկին
Անտառ ու այգի,
Վշտում ե ուժգին
Զուրբ գետակի:



Հավքերը սիրուն
Համերգ են կազմել,
Արտում ու դաշտում
Երգ ու հորովել:

Թիթեռներն ուրախ
Թռչում են դեռ դեռ...
Զան, տեսքիդ մատաղ,
Գարուն ե արդեն:



Գարնան հրավերը

1

Օտներ, ծաղիկներ, խոտեր ու բույսեր,
բավական ե, վորչափ քնեցիք, — ասաց
արեգակը. գարուն ե, որերը տաք են,
շուտով արթնացեք, երկիրը վարդարեք:
— Բարև՝ քեզ, բարև, սիրելի գարուն ա-
սացին խոտերը և կանաչեցին:

— Մենք շատ ուրախ ենք, աննման գարուն,
ձայն տվին ծառերը, արձակելով հապարա-
վոր բողբոջներ՝ վոր լսեն ինչ ե ասում
գարունը:

— Մենք ել ուրախ ենք, սիրուն գարուն,
մեր պտուկները հապիվ տաքացան. շու-
տով կծաղկենք և քեզ կգովենք, — ամեն
կողմից ձայնեցին պտղատու ծառերն ու ծա-
ղիկները:

— Տըպ, տըպ, տըպ... շնորհակալ ենք,
նախշուն գարուն, — ասացին մեղուները:
Հապիվ ապատվեցինք ծանր ձմեռից. ամ-
բողջ ձմեռ թմրած ենք մնացել մեր նեղ-
լիկ խցիկների մեջ:

2

Մեղուները խումբ-խումբ թռան,
գնացին խնձորենու մոտ, այսպես ասացին.

- Կարմրածաղիկ խնձորենի,
Վողջ ձմեռը քաղցած ենք,
Ուժից հալից ընկած ենք.

Ծաղիկներդ բաց արա,

Մեզ բուրբիս տեղ արա:

Մենք ուզում ենք քո հիւթից

Ծծենք, ուտենք, կշտանանք,

Ուրախ պլարթ տուն դառնանք:

- Ափսոս, շատ ափսոս, ծաղիկներս դեռ
դուրս չեն եկել, թե չե՛ս ձեզ պես հիւրերին
ես շատ սիրով կընդունեի: Գնացեք բալե-
նու մոտ, նա շուտ է ծաղկում:

Մեղուները թռան գնացին բալենու
մոտ և ասացին.

- Սիպտակ ծաղիկ բալենի,
Վողջ ձմեռը քաղցած ենք,
Ուժից հալից ընկած ենք.

Ծաղիկներդ բաց արա,

Մեզ բուրբիս տեղ արա:

Մենք ուզում ենք քո հիւթից

Խմենք, ծծենք, կշտանանք,

Ուրախ պլարթ տուն դառնանք:

- Բարձր եկաք, ժիր մեղուներ, հազար
բարով, սիրուներ, ասաց բալենին. վաղը
եկեք, ծաղիկներս դեռ քնած են:

3

- Տըզզ, տըզզ, տըզզ... տրտնջացին,
աղմուկ բարձրացրին մեղուները. վոր դուք
դեռ չեք պարթնել, բա ինչու մեզ ձայն
տվա՛վ, քնից վեր կացրեց արևը, ինչու ա-
սաց, թե գարունն է ուղարկել իրան, տըզզ,
տըզզ, տըզզ...

Են կողմից նայեց, ծիծաղեց նշենին
ու ձեռքով արավ.

- Այստեղ եկե՛ք, այստեղ եկե՛ք, սի-
րուն մեղուներ, իմ ծաղիկներս վաղուց են
ձեզ սպասում բաժակները անուշ հիւթով
լի: Ու մեղուները ուրախ-ուրախ թռան
դեպի նշենին:

-

Ծաղիկներ՝ մանուշակ, վարդ, մեխակ, շուշան...

Միջատներ՝ մեղու, ճանճ, մորեխ...



Թիթեռը և մանուկը

ՄԱՆՈՒԿ՝ Սիրուն թիթեռ, ինձ ասա,
Թե ինչով ես դու ապրում.
Ամբողջ որը խաղում ես,
Ինչպես ե վոր չես հոգնում:

ԹԻԹԵՐԻ՝ Սիրուն կանաչ դաշտերում
Ես ապրում եմ համարձակ.
Ծաղիկների հոտն անուշ
Իմ կերակուրս ե միակ:

Բայց իմ կեանքը շատ կարճ ե
Հավասար ե մի որի
Հենց վոր անցնի ցերեկը
Իմ արևն ել կմարի:

Ծառերն ու կաջինը

Ծառերն անտառում շատ վոր նե-
ղացան կաջնի ձեռիցը և ել չիմացան ինչ
անեն, վոր իրանց գլուխը պահեն, խորհուրդ
արին, վոր մի հնար գտնեն:


— Կաջինն ինչ ե վոր մեզ կարողանա զու ա-
նել, հաղթել, ինչ մեծ բան ե նա, — այսպես
ձայն տվավ ծառերից մեկը: — Մենք վոր կոթ
չտանք, կաջինն ինչ ե, վոր հանդգնի անել մեզ
կտոր - կտոր:

Թող իմացողն իմանա և վուր տեղվ
կաջնից չնեղանա: Ով վոր կոթ կտա պողպա
տե կաջնին, թող Երկու ձեռքով խփե իր
գլխին:

Անծրև

Սրկինքը ծածկվեց մուխ - մուխ ամպե
րով: Ամպերը գորգուացին և փայլակներ ար
ծակեցին: Մեկ ել հանկարծ սկսվեց հորդ

անձրև գալ: Անձրևի կաթիլները դիպչում են տների տանիքներին և լուսամուտների ապակիներին. Թըրթիկ, հա շորթիկ լսվում են ամեն կողմից: Մարդիկ փակվում են տներում, վոր չթողնեն: Մի քիչ հետո փողոցներում երևում են ջնիռու վտակներ վորոնք արագութեամբ



հոսում են ձորը և միանում գիւղական առժաւ կին, վորը այժմ մի մեծ ու պղտոր ջուր է դառել: Առուն գնում, միանում է գետակին, գետակն էլ գետին: Իսկ գետերը... իմացեք, սիրելի մանուկներս, ո՞ւր են հավաքվում գետերի ջրերը

Զուր

Առանց ջրի վոչ մի կենդանի եակ չի կարող ապրել: Զուրը հարկավոր է թե մարդկանց, թե կենդանիներին և թե բույսերին: Զրի վրա մարդիկ ճանապարհորդում և ապրանքներ են տեղափոխում: Զուրը շարժիչ ույժ է: Նրանով շարժվում են ջրաղացների և շատ գործարանների անիվներն ու մեքենաները: Զուրը մաքրում է ամեն ինչ: Զրի մեջ մարդիկ լողանում են և լվանում իրանց շորերը:

Բայց ջրի հետ պետք է զգուշ լինել: Զրից դժբախտ դեպքեր ել են պատահում: Նրա հեղեղներից փլվում են տներ և ջրաղացներ, ջրի մեջ խեղդվում են շատ մարդիկ և անասուններ:

—||—

Զրեր՝ աղբիւր, առու, գետակ, գետ, լիւ, ճահիճ, ծով:

Գեպրն ու գեպուակը

Փոքրիկ գեպուակը հոսում էր չորակի մեզով և թափվում գեպի մեջ.

- Դե՛ս փոքրն էս դու, սասայ գեպն առ վակին:

- Եթե մե՛նք, փոքրիկ գեպուակներս չլինե՛նք, դու այդքան մեծ չեիր և՛նք, պարասխանե՛ս գեպուակը:

Առած. ջուրն իր ճամբեն կգտնի:

Հոտաղ վարդանը

Վարդանի հայրը գլուխն առավ ու գնաց. գնաց հասավ ոտար աշխարհ, փող աշխատի, տուն պահի:

Փոքրիկ վարդանը հոտաղ դառավ, վոր հաց ճարի. առավոտները շվին

փչում, գառների հետ ուրախանում եր. ա - մեն որ հանդից տուն վերադառնալիս մորը հարցնում եր.

- Ապի, այ ապի, ապիս չեկանվ...

Վարդանը հանգում գառների հետ խոսում եր ու ասում.

- Սիրտս վառվում, կրակվում ե, իմ ապի գառներ, մուշ-մուշ կերեք, սառը ջուրն անուշ խմեք, ականջ դրեք շվիս ձենին.

- Դըլո - լո - լո, մի լուր տվեք իմ հորից, մի լուր...

Պարապմունքներ: Երկրագործություն, անասնապահություն, առևտուր, ծառայություն...

Խորամանկ աղվեսը

1

Քաղցած աղվեսը շատ ման եկավ, վոր մի բան գտնի, փորը կշտացնի.

բայց բան չգտավ: Մեկ ել տեսավ մի
խոււմբ ագռավներ. խորամանկը փրո-
վեց ձիւնի վրա, վոտքերը մեկնեց ու
ձեւացավ սատկած:

2

- Ղա՛, ղա՛, ղա՛, գնանք աղվեսի աչքերը
հանենք, նախաճաշ անենք, կռավեցին
ագռավները:



- Մի՞թե նա սատ-
կած է, հարցրեց
մեկը:

- Զգուշ կացեք,
խորամանկը փոր-
ձանք կբերի:

- Բայց նա չի շարժվում:
- Իսկապես, աչքերն ել անշարժ են:
- Զե, նա սատկած է, ասաց մի ագռավ
և վրա հասավ, պոչը պինդ կտցեց ու
հետ-հետ փախավ:

Աղվեսն անշարժ պառկած էր գետ-
նին:

- Սատկած է, սատկած, ասաց մի ուրիշը
և վրա հասավ, վոր աչքը հանի:

Աղվեսը հապարավ ու բռնեց:

- x -

Մանուշակ

-

Կապույտ գլխով, կանաչ վոտով
ես ծաղիկ եմ անուշ հոտով:
Թեև տունկս փոքրիկ է, ցած,
Արտներում միշտ թագ կացած,
Բայց իմ փունջը ամենի տան,
Թե աղքատի, թե մեծատան,
Իբրև գարնան առաջին վարդ:
Տեսնում է միշտ ամեն մի մարդ:
Ես եմ սիրուն գարնան գուշակ,
Իմ անունն է մանուշակ:

Գատավորը

1

Մի վաճառական քսակը կորցրեց:

-Քսակի մեջ երկու հարիւր մանեթ կա, ով գտնի, կեսը կտամ իրան, հայտարարեց նա:

-Ես եմ գտել քո քսակը, ասաց մի խեղճ մարդ. ասա վերցրու և տուր ինձ կեսը՝ խոստումիդ համաձայն:

-Քսակիս մեջ մի թանգագին քար ել կար, ասաց վաճառականը. բեր այն ել, վոր տամ հարիւր մանեթը:

Խեղճ մարդը ինչ տեսակ դարձրեց չեղավ: Վաճառականը խոստումը չըկատարեց:

2

Գործը հասավ դատի:

-Սթե քո փողի հետ թանգագին քար ել կար, նշանակում ե այս քսակը քոնը չե, վճուեց դատավորը. փողը մնում ե գտնողին, իսկ դու գտիր քո քսակը:

Պաշտօնեաներ՝ գափավոր, ուսուցիչ, կոմիսար...

Գարուն

Գարունն եկավ Վուգեց դաշտեր

Բիւր երփներանգ ծաղկունքով.

Սարի լանջից բիւր առվակներ

Ջրնգացին բերկրանքով:

Բնութիւնն ուրախ դեմքով

Թնդաց երգով կենսատու

Ու ամենքը գարնան շնչով

Սլան նոր կեանք տոնելու...

ԱՄՊԵՐ

Ամպեր են վազում բարձր լեռներից
խիստ քամու ձեռից, փախչում, գնում են,
կարծես խրփնում են ծարավ արտերից:

Կացեք, այ ամպեր, ինչո՞ւ եք փախչում,
անձրև չեք թափում, մեր ծարավ արտեր՝
որեր համրելով, ձեզ են սպասում:

Քամի՛, դու քամի, խղճա՛ արտերին,
թող կանգնեն, թափեն, անձրևի շիթեր,

ջրեն մեր արտեր:

Քամին հանդարտվեց, մեղմ անձրև
թափեց, արտերը ջրեց: Արտը բարձրացավ,
ցողուն արձակեց ու հասկեր բռնեց: Գիւղա-
ցին գնաց, տեսավ ու խնդաց, խնդաց ու
ասաց. -

Փանք քեզ, ո՛վ աստված,
Վոր տվիր մեզ հաց,
Զթողիր քաղցած:

Երկրագործ

Ո՛հ, երկրագործ, երկրագործ,
Քանի՛ սիրուն ե քո գործ:

Արևը չժագած՝ մաճն ե քո ձեռքիդ,
եոթ զույգ եզ, գոմեշ լծած գուլթանիդ,
ծրում ես, պատռում դու կոշտ ու խո-
պան լեռներ ու ձորեր, հանդ ու անդառ-
տան:

Ցանում ես ցորեն, կորեկ ու գարի,

հաճար ու վարսակ, բրինձ ու բամբակ:
Ծլում են, օաղկում ձակտիդ քրտինքով
քո վարած դաշտեր, վոր լի եր փշով:

Անցնում ե գարուն, վոսկեպոծ հաս-
կեր լցվում, ծածկում են քո սիրուն ար-
տեր. քամին փչում ե, արտը տատանում,
կարծես նորհարս ե, հորանց ե գնում:

Հասնում ե ամառ. մանգաղը ձեռ-
քիդ, հնձում ես, հնձում, խուրձեր կապո-
տում, խուրձերը բարդ-բարդ սայլով ու
ձիով կրում ես, բերում, կալումդ դիպում:

Հաշան ես անում, կալում ու քա-
մում, մաքուր ցորենը տանդ ամբարում,
խկ չոր դարմանը՝ ձմեռվան պաշար՝ անաս-
նոց համար մարագդ լցնում:

Եվ երբ փչում ե ցրտաշունչ ձմեռ,
խրձիթում նստած քո խոփն ես սրում, արոր
ու գուլթան սարքում, պատրաստում և
գարնան գալուն նորից սպասում:


Ո՛հ, երկրագործ, երկրագործ,
Քանի՛ սիրուն ե քո գործ:

Առած. հացն ուտելով, բանն անելով:



Հատիկ

Հուլիսը բացվում են, շուտ արտը գնամ,
 Պատռեմ սուր խոփով ես կուրծքը հողի.
 Իմ սիրուն հատիկ, քեզ նրան պահ տամ
 Մինչև որերն ամրան արևի:

Ծլիր, կանաչիր, վոսկե սավանով
 Ծածկիր իմ արտը վողջ ալեծածան,
 Նոր այն ժամանակ անուշ շրշիւնով
 Տուր ջարդված սրտիս մի քուն հանգստեան:



Հավ ընկեր



Մարդիկ վեր
 առան կակաչի հա-
 սարակ ծաղիկը և
 մանուշակի հետ մի
 խեցիի մեջ տնկեցին:
 Մի քանի ժամանա-
 կից հետո կակաչը
 մանուշակի հոտ ստա-
 ցավ:

Մեղուն և հավը

Հավը մեղվի վրա ծիծաղելով
 ասաց մեկ անգամ.

— Ինչ անշնորք ճանճ ես դու, ամ-
 բողջ որը ծաղկից ծաղիկ ես թռչում-
 թռչկոտում և վոչ մի բանի պետք
 չես գալիս:

- Իսկ դու, հավիկ-մարիկ, ինչ ես շինում, հարցրեց մեղուն:

- Միթե չգիտես, թե ինչ եմ շինում ես, քեզ նման պարապ-սարապ չեմ տղտղտում: Ես որը մեկ ձու եմ ածում, մեկ ձու. գիտես արդեոք՝ թե մեկ ձուն քանի հատ ե:

- Գիտեմ, գիտեմ. հասկացա: Բայց ես մինչև հիմա կարծել եմ, թե դու որը հարիւր ձու ես ածում:

- Ինչպես կարելի ե որը հարիւր ձու ածել, անխելք մեղուն:

- Ապա եթե քո ածածդ ընդամենը մի ձու ե, ել ինչո՞ւ ես հարիւր անգամ կրկնում՝ թե հայ, հարայ, լսեցեք, վոր ես ձու եմ ածել: Իմ կարծիքով այսքան կրկնալուծն մի ձուն շատ քիչ ե: Այնպես չե՞, իմաստուն հավիկ-մարիկ:

- Բայց դու ինչ ես շինում, դու, վոր իմ ձուն քիչ ես համարում:

- Ես ինչ վոր շինում եմ, քեզ պես կրկնալով չեմ յայտնում ուրիշներին: Ես

գլուխս քաշ գցած մեղր եմ շինում: Գիտես ինչ ե մեղրը: Դա հավի կերակուր չե, ուրեմն և քո խելքի բանը չե, հավիկ-մարիկ:

-

Առած. անգործի լեզուն երկար կլինի:

ՀԱՆՆԵԼՈՒԿՆԵՐ

-

1. Անջուր ջաղաց, անկրակ բաղարջ:

-

2. Վոչ ցորեն եմ, վոչ գարի, վոր հողագործն ինձ ցանի. Առանց ձեռի հունցած եմ, Առանց կրակ թխած եմ, Թոնիր, ջաղաց տեսած չեմ, Զեր ամենիդ սիրածն եմ:



Ուռենի

Սիրուն ուռենի,
 Կանաչ ուռենի,
 Ճիւղերդ կախ-կախ,
 Ինչո՞ւ չես ուրախ:
 Սիրտդ ե՞ ծարավել,
 Արևն ե՞ վառել,
 Վոր եղբան ջահել
 Գլխիկդ ես ծռել,
 Վշտոտ ես դառել:
 Ծնկիդ ես խփում,
 Արցունք ես թափում:



Ճանճը

Խոնարհ ու հեղ
 Մի հոգնած եղ
 Արորն ուսին,
 Ճանճը պոչին,
 Մի իրիկուն
 Գալիս եր տուն:
 Մեկ եւ ճամբին
 Մի ուրիշ ճանճ
 Են նստածին
 Եսպես ասաց.
 «Ես ելան հետ
 Վորտեղից ետ»:
 Քիթը տնկած
 Ճանճը ասաց.
 - Մենք վորտեղից.
 Վարում եինք,
 Վարատեղից:

Կորնելի ու Գաբրիել

Գաբրիել ասաց Կոր-
նելիին
- Կորնելի տղբայր, արքա գնանի
ժամանակ մի հարուստ եր-
կիր, ուր շատ վուկի կա:
Ապրելով վուկու երկրում:
- Քեիտերոք երկար են, բայց
կտելոք կարե են, գաբրիել
բայր պարասխանեայ Կոր-
նելի յիւջու պարտ են մեւ
գնանի վուկու երկրի:
Իող վուկին իմա գա մեւ
մոր:

Շուտասելուկ

Ե՞տք ցորեն եր աղում	Եկել են թամաշա
Ողորտիք եր սաղում	Լազարոն արին պարբաշի
Վոչխարները չորս թե հինգ	Ու ծախ տվին տաշ-տաշի
Աջամ են մի սրինգ:	Եստես պարոզ այ շաբաշ
Ագուակները զարգաշա	Մի գորտ բերեք անի ծաշ...

Կամակոր սայլապաններ

Երկու սայլապաններ ճամբի մեջ-
տեղումը դեմ առ դեմ եկան: Նրան-
ցից մեկը գնում էր քաղաք, իսկ մի-
ւր՝ տուն: Մեկը բղավում է
- Ճանապարհ տուր, ես շտապում եմ,
ես քաղաք եմ գնում:

Իսկ միւսը գոռում է.

- Ես ավելի եմ շտապում, պետք է
շուտով տուն գնամ:

Այսպես համարվել են երկուսն
ել և երկար ժամանակ բղավում են:

Բարեբախտաբար մի երրորդ
գիւղացի հանդիպեց դրանց և ասաց.

- Իմ կարծիքով՝ ով ուզում է ավելի
շուտ տեղ հասնել, նա ավելի շուտ
պետք է ճանապարհ տա միւսին:

Այս վոր լսեցին կամակոր սայլա-
պանները, երկուսն ել կտորվեցին և ամեն
մեկը նրանցից շտապեց միւսին ճամպար տա:

Կարբեր՝ սայլ, սահակ, կտաք հանրակառ-

Էջմարցախոս Առքիկը

Առքիկին մի փոքրիկ կային
 տին ընծայել: Արեւիսն ուրախ
 իր սրայած հստրով, չտուն ըն-
 կած բանը կարարում էր: Հաս-
 կարեց հասն իւր հայրիկի հոսր
 փնկած ծառը: Երբ հայրը հկա-
 փեց, վոր ծառը փնկած է, վշտա-
 ցած հարցրեց.

- Ես ո՞վ ե կարեց իմ ծառը. շուր
 ասացե՛ք, վոր մի լավ պատժե՛մ
 մեղավորին:

- Ինչ պատժիր, հայրիկ. ես եմ կրք-
 րել, վրա բերավ Առքիկը:

- Ծառն ինչ համար թանկ սր-
 ժեր, բայց ինչ էջմարցախոսութի-
 նը ավելի թանկ է, ասաց հայ-
 րը ու պինդ գրկեց Առքիկին:

Առած. ծառը ձգում կերեա:

Խեղոք մարդ

Ճանապարհին ավազակները ուզեցին
 մեկին բռնել: Նրանց ձեռքից ազատվե-
 լու համար մարդը փախավ, բայց
 երբ տեսավ, վոր ավազակները մոտե-
 նում են՝ ուզեց թագ կենալ մոտիկ այ-
 րի մեջ: Մեկ էլ հանկարծ նայեց, տե-
 սավ, վոր քարայրի բերանին սարդը վոս-
 տայն եր հիւսել. նա մտածեց, չգոյշ կեր-
 պով վոստայնի տակից սողալով մտավ
 այնտեղ:

- Ներս մտնե՛ք այս այրը, ասաց ավա-
 զակներից մեկը, գուցե նա այնտեղ է
 թագնվել:

- Նա այնտեղ չէ մտել, չես տեսնում,
 սարդի վոստայնն անվնաս է մնացել:
 Այսպես մտածելով նրանք հեռացան և
 մարդն ազատվեց:


--- 0 ---

ԱՄԱՌ

Ամառվա ամիսներին որերը լինում են երկար և տաք: Սաստիկ շոգերից քաղաքներում կենսքն անտանելի է դառնում: Քաղաքներից շատերը շատերը գնում են ամառանոցները մաքուր ող շնչելու և հանգստանալու համար: Գիղացիներից ել շատերը բարձրանում են սարերը, իրանց հետ տանելով նաև անասուններին:

Ամառը հասնում են ամեն տեսակ պտուղներն ու հացաբոսյսերը: Մուտենում է հունձի և այգեկութի ժամանակը

Երբեմն ամառվա այդ շոգերին երկինքը ժածկվում է գորշ ամպերով, փայլատակում է կայծակը, հորդ անձրև է գալիս: Այդ անձրևներից հետո ողբ թարմանում է; ամեն ինչ սուգվում, զարկարվում է և ուրախ տեսք ընդունում:



ԱՄԱՌ

Գիշեր

Գեղեցիկ ու զով
 Գիշեր Ե պայծառ.
 Անուշիկ քնով
 Բնած Ե աշխարհ:

Աստղերն Ե սիրուն
 Ժպտով փայլում
 Իրանց նաչելուն
 Ճամփա Են դնում:

Ծառերը մեղմիկ
 Բամուց որովում,
 Հեզիկ ու նազիկ
 Երգ են սլսում:

Գիղեցիկ ու զով
 Գիշեր Ե պայծառ.
 Անուշիկ քնով
 Բնած Ե աշխարհ:

Իսկ լայնատարած
 Երկնքի վերով
 Լուսինն Ե կամաց
 Անցնում սողալով:

Ու քնած երկրին
 Գետակն ու բուն
 Երգով միասին
 Որոր են ասում:

Ժամանակ՝ ցերեկ, գիշեր, որ, շաբաթ, ամիս, տարի...

Երկրագործի աշխատանքը



Գարնան բացվելուն
 պես գիւղացին արո-
 րով կամ գուլթանով
 վարում Ե հողը և
 ապա տափանով փափ-

կացնում նրան, վորպեսզի հատիկները
 փափուկ և տաք անկողին ունենան:

Այնուհետև գիւղացին ցանում Ե
 արտը. նա գոգնոցից ձեռքով վերցնում
 Ե հատիկները և շաղ տալիս արտի մեջ:

Գարնանային արևը տաքացնում Ե հա-
 տիկը, անձրևը ջրջը-
 րում Ե նրան: Հատի-
 կը տալիս Ե արմատ,
 ցողուն, տերևներ: Ար-
 տը զմրուխտի պես կա-
 նաչում Ե: Ցողուննե-
 րը հասկեր են տալիս:
 Հասկերի մեջ հատիկներն




ածում, ուռճանում են: Ամառվա վերջին դեղնում են հասկ ու ցողունը, հատիկները հասունանում են:




Հնձի ժամանակն է: Գիւղացին սուր-սուր գերանդիով կամ ման-գաղով հնձում է ար-տը խուրճեր կապում և սայլով կամ ձիով

կրում դեպի կալը: Կալում գիւղացին կալսում է ցորենը, գարին. հաշան է ա-նում: Մաքուր ցորե-նըն ու գարին ածում է շտեմարանը, իսկ հարդը մարագն է լցնում, վորպեսզի ձմեռը անասուննե-րը կեր ունենան:



Լիշնանը գիւղա-ցին ցորենը տանում է ջրաղացը և աղում է: Մաքուր ալիւրը բե-րում է տուն և իր

ձմեռվա պաշարն ապահովում:




Ձմեռը գիւ-ղացին տաք ողա-յում նստած՝ վա-յելում է իր ար-դար վաստակի պտուղները և հան-գստանում, վորպեսզի գարնան բաց-վելուն պես նորից սկսի իր ծանր աշ-խատանքը:

Հանելուկ

Մի տուն ունինք, տան նման չի.
Գետի ափին, մեծ ժայռի տակ
Կըկըպած է մենը-մենակ:
Գիշեր-ցերեկ բայղուչի պես
Ձայն է հանում, գոռում այսպես.

Թրճիկ, չրճիկ.
Վըշտ, ծըշտ...

Առուն բարձրից ցած է թռչում,
 Պատը ծակում, միջովն անցնում:
 Հատակումը դղրդոց է,
 Շրթմփոց ու թըրթիկոց է:
 Տան մեջ երկու ուժեղ գազան,
 Մինը տակին, միւսը վրան,
 Առիւծի պես մռնչում են,
 Իրար ըռեխ կրծոտում են...
 Սրանք մարդ չեն, վոչ արջ, վոչ գայլ,
 Ինչ եւ վոր տաս, քիչ է դարձեալ.
 Հարամի են իսպառ քաղցած,
 Եւ չեն լսում վոչ խոսք, վոչ լաց:
 Դուրս են մղում իրանց փորից
 Կերակուրը փոշի դարձած...
 Այժմ ասեք, այդ ինչ տուն է,
 Վոր մինչ այսօր եւ կանգուն է:



Հողագործի բարեկամները

-

Յրանսիայի անտառներում, դաշտ-
 րում և ճանապարհներին փայտի ձողերի
 վրա կախված է հետևեալ հայտարարու-
 թիւնը.

«Վոզնին կերակրվում է մկներով,
 խիտենջներով, թրթուրներով և հողագոր-
 ծի համար վնասակար ուրիշ կենդանիե-
 րով, - մի սպանեք վոչնուն»:

«Դոդոշը (մեծ գորտ) իւրաքանչիւր
 ժամում վոչնչացնում է մինչև երեսուն ձի-
 ճու, - մի սպանեք դոդոշներին»:

«Մայիսեան բլեյները, թրթուրները
 և ձիճուները հողագործութեան գլխավոր
 թշնամիներն են: Միայն թռչունները կա-
 րող են հեշտութեամբ վոչնչացնել նրանց:
 Թռչունների բներից մի հանեք վոչ ձու
 և վոչ եւ ձագ»:

-

ԵՐԿԻՐՆԵՐ՝ Թուրքեստան, Ռուսաստան, Հայաստան,
 Յրանսիա, Գերմանիա, Անգլիա...

Գիւղի հեռախօսը

Ավագ ապին կանգնած է իրանց
կալոււմը, իսկ Տիգրանը գիւղամիջումը և
միմիանց հետ խոսում են գիւղական հե-
ռախօսով: Տիգրանը մի ձեռքն ականջին
դրած, միւսով փափախը բռնած՝ ցածր
ու բարձր է անում և բարձրածայն կան-
չում է Ավագ ապուն: Իսկ սա աջ ձեռ-
քով մաֆակը գետնին հենած, ձախը տա-
րել է ականջի քամակը հավաքել ու խումե:

- Ապի, ապի, Ավագ ապի,
Ավագ ապի,
Աստված սիրես, եշը կապի,
Եշը կապի...

- Ադա Տիգրան, Տիգրան, Տիգրան
Եսեյ Տիգրան
Իշին ինչ կա, ինչ կա նրան
Ինչ կա նրան...

- Մերոնց իշին երեկ գիշեր
Երեկ գիշեր
Գազանները փորն են բշել...
Փորն են բշել...

- Այ հայն ա, այ տեղն ա,
Թամամ տեղն ա,
Գիքոր բիձու իստակ մեղն ա,
Հալալ մեղն ա...

Խուլի այծերը

Մի խուլ մարդ երեք այծ ուներ,
Մեկի պոզը կոտրած: Ինչպես է լինում,
մի որ այծերը կորչում են, տերն ել ընկ-
նում է այս ու այն կողմ այծերը գտնելու:

Պատահում է մի ուրիշ խուլ մար-
դի, վոր վար եր անում, հարցնում է նը-
րան

- Բարի աջողում, ախպեր, այծերս չես

տեսել:

- Լավ ե այսպես ցանեմ, կտամ Աստ-
ծուն, ձեռքը մի կողմ թափ տալով պա-
տասխանում ե վար անողը:

Այժատերը կարծելով, թե դեպի
ցույց տված կողմն են գնացել այժերը -
ասում ե

- Թող աստված վկա լինի, թե գտա այ-
ժերս, պոզը կոտրածը քեզ եմ տալու:

Ասում ե և գնում ման գալիս,
վերջը գտնում ե այժերը, ուրախ-ուրախ
առաջն արած՝ քշում բերում ե վար ա-
նողի մոտ և ասում.

- Շնորհակալ եմ, ախպեր, այժերս գտա,
ան, այս այժն ել քեզ. այս ասելով՝
պոզը կոտրած այժը քշում ե դեպի նա:

- Ես չեմ կոտրել դրա պոզը, ես տե՛ -
ղեակ չեմ, վարմանքով ասում ե վար ա-
նող խուլը:

- Ինչ ես խոսում, ասում ե այժատերը,
ես այս եմ խոստացել. վոր մեռնես ել,
միևս այժերիցս տվողը չեմ:

- Զե, ես չեմ կոտրել. բարկացած ասում
ե մեկը:

- Զե, ես այս եմ խոստացել, բարկացած
պատասխանում ե միևսը:

Սա նրան, նա սրան, բանը հաս-
նում ե տոբ ու դմբոցի. իրար քաշ պա-
տառ անելով այս երկու խուլերը գնում
են գիւղ՝ տանուտերին գանգատ:

Գիւղի մոտ սրանց հանդիպում ե
մի պառավ, վոր նույնպես խուլ ե լի-
նում:

- Այ, նանի, ասում ե այժատերը, իմ այ-
ժերը կորել եին, գնացի, ես մարդին հար-
ցրի, սա ել տեղը ցույց տվավ. պոզը
կոտրած այժս տալիս եմ, չի վերցնում, ես
եր եմ խոստացել, վոր մեռնի ել միևս
այժերից տվողը չեմ:

- Այ, նանի, ասում ե արտատերը. ես
մարդը եկել ասում ե թե այժիս պոզը
դու ես կոտրել. ես աստված ե վկա, այդ
բանից բոլորովին տեղեկութիւն չունեմ:

- Ե՛, վորդիքս, աստված ձեզ բարի տա,

պատասխանում ե պառավը, ինչ ել
 ուզում ե լինի, ես ձեր խնդիրը չեմ կա-
 րող կատարել, քանի վոր մեր չքոտ հար-
 սը տանն ե, ես են տունը վոր կոխողը
 չեմ:



Վու

Վոպնու վոխը

Վոպնին վարանում եր իր վոխերիմ և
 թշնամի ոչին: Ոչը կծել եր նրա վոպնիկի
 վոպր: Վոպնին վորոնեց ու գրամ ոչին
 մի չորում. բունեց պոչից ու կծկվեց:


Ոչը վոլորվեց, բոլորվեց, կորվեց,
 իրեն իսկեց վոպնու փշերին, արնափամ
 եղավ ու իր արիւնի մեց ողողվեց: Վոպ-
 նին թողեց ոչի պոչն ու գնաց իր բանին:

Այսպիսով նա վոխը հանեց իր չար
 վոստիկից:



Մաստանը

Կըտի - կըտի Մաստանը,
 Կըտիկը մտավ բոստանը,
 Վոտով մարգը տրորեց,
 Գլխով հողը փորփրեց.
 Ծուլի - ծուլի վեր ելավ,
 Իր պոչի հետ խաղ արավ.
 Բոստանչին ել գուրս թռավ
 Չար այծիկին ձեռք առավ.
 Տվեց - տվեց, տուր - տվեց
 Զանը վրեն քրքրեց.
 Զամուն տվեց մապերը,
 Տեղից հանեց պոպերը.
 Հանած պոպերի տեղը
 Լցրեց աղ ու տաքտեղը
 Բուլիկ դարձավ Մաստանը
 Ել չեր մտնում բոստանը:



Սարդը


Տես, սարդը չար
ձանճի համար
Ինչ թակարդ է
Պատրաստել.

Ինքն եւ սոված,
Շունչը քաշած,
Նրա մոտին
Պահ մտել:

Ե՛յ տղտղվան
Ու վազվվան
Փոքրիկ ձանճիկ
Զգույշ կաց.

Սարդը պինված,
Աչքը լարած
Քեզ է նայում
Տապ արած:

ՄԻՋԱՑՆՆԵՐ՝ ձանճ, բզեզ, մրջյուն, ճպուռ, մորեխ...



Գեղեցիկ տը...

Ես նոր եի վորսորդ դառել...
Սկսեմ եի խիտ ու կանաչ անտա-
ռով հրապանն ասիս:
Նանկարժ սաղարթախիտ թփերի
յակից տղամ վարթարես մի տղնիկ և...
Ես սպանեցի նրան:
Խաչ չգրեմ, - րեքնները փախա-
ցին, թռչունները ձվապահ, թե՛ սիրտ
մընգաց.
- Խնչո՞ւ սպանեցիր... Ինչ՞ վոր նա
գեղեցիկ տը...

Չորս եղանակ

Որը տաքցավ, ձիւնը հալվեց արևից,
 Բչբչալով ջուր է հոսում դռներից.
 Մար ու ձորեր վարդարվեցին կանաչով,
 Դաշտը ծածկվեց վոչխարների հոտերով:
 Հա՛ - հա՛ - հա՛, գարուն է,
 Տեսե՛ք, ինչպես սիրուն է...

Սաստիկ շոգ է, ցորեն, գարի հասել են,
 Հնձվորները խոտը քաղել, դիպել են,
 Բոլոր ծառեր ծածկվել են կանաչով,
 Պտուղները «ձիթ» են անում ժպտալով:
 Հո՛ - հո՛ - հո՛, ամառ է,
 Արևը խիստ կվառ է...

Շոգերն անցան. պտուղները քաղեցին,
 Հացով, մրգով ամբարները լցրեցին,
 Երկինք ամպեց, բարակ անձրև է մաղում,
 Մերկ դաշտերը և ծառերը վողողում:
 Ե՛յ - ե՛յ - ե՛յ, աշուն է,
 Տեսե՛ք, ինչպես նախշուն է...

Որը կարճ է, արև չկա, շատ ցուրտ է,
 ձերմակ ձիւնը քուլա - քուլա կբրթե,
 Մարդ, անասուն բուք - բորանից վախեցած
 Տաք - տաք տներ, խոր - խոր բներ են մտած:
 Ո՛յ - ո՛յ - ո՛յ, ձմեռն է,
 Անտանելի մի բեռն է...





Պատմեցեք ինչ ե նկարած

ԳԱՌՆԻԿ ԱՆՊԵՐ

1.

Մայրիկը մեռավ, հայրիկը մեռավ,
 Մանուկն ու Մանուշ անտեր մնացին.
 Մարդիկ անկշտում, մարդիկ անիրավ,
 Փոքրիկ վորբերին չպահպանեցին:
 Եւան բռնեցին իրարու ձեռքից,
 Անձանոթ ճամբով, տկլոր ու սոված,
 Հեռացան, կորան են չար աշխարհից

Երկու վորբեր, քուր ու ախպեր, կորած
 գնում են հեռու. արևը վառ, ճամբեն եր-
 կար, վոչ աղբիւր կա, վոչ առու:

Քույրը մեծ եր. վոնց վոր լինե՞ր՝ կհամ-
 բերեր արևին, բայց ախպերը փոքրիկ եր դեռ,
 չեր դիմանում ծարավին:

Գնում են, գնում, տեսնում են ճամբին
 կովի վոտնատեղ, մեջը լիքը ջուր:

«Քուրիկ ջա՛ն, քուրիկ, ես շատ եմ ծա-
 րավ, ինչ կըլի թողնես, խմեմ մի պուճուր»:
 - Զե, ախպեր ջան, չե, դու կով կդառ-

նաս. կովի կճղակի տեղից մի խմի; մի քիչ ել
կացի... քիչ ել վոր կենաս, առաջներիս պաղ
աղբիւր, կա հիմի:

Երկու վորբեր քուր ու ախպեր՝ գը-
նում են, գնում, գնում են հեռու. արևը
վառ, ճամբեն երկար, վոչ աղբիւր կա, վոչ
առու:

Գնում են, գնում, տեսնում են ճամ-
բին ձիու վտանատեղ, մեջը լիքը ջուր:

«Քուրիկ ջան, քուրիկ, ես շատ եմ ծա-
րավ, ինչ կըլի թողնես՝ խմեմ մի պուճուր»:

— Զե, ախպեր ջան, չե, դու ձի կդառ-
նաս, ձիու սմբակի տեղից մի խմի, մի քիչ
ել կացի, քիչ ել վոր կենաս, մոտիկ մի վու-
լալ աղբիւր կա հիմի:

Երկու վորբեր, քուր ու ախպեր, գը-
նում են, գնում, գնում են հեռու. արևը
վառ, ճամբեն երկար, վոչ աղբիւր կա, վոչ
առու:

Գնում են, գնում, տեսնում են ճամ-
բին գառան վոյնատեղ, մեջը լիքը ջուր.
Փոքրիկ ախպերը ել չի համբերում, քրոջից

թաքուն խմում և պուճուր:

Քույրը մին ել ետ ե նայում, վոր մի
գառը մղկըտալի իր ետևից տխուր մայում
ու մայելով վազ ե տալի:

— Ախ, իմ Մանուկ, վորբ ու անտեր, իմ
անլեզու գառնիկ ախպեր, ել վոնց անեմ, ինչ
անեմ ես...

Կանչում ե խեղճ Մանուշն եսպես, վայ
ե տալիս. լալիս, լալիս, բայց ել ինչ աներ,
բայց ել վոնց աներ...

Երկու վորբեր, քուր ու ախպեր, գառն
ու աղջիկ մոլորված, հեռու հանդում, տխուր
տրտում, գնում, գնում են կորած:

2.

Սոված ու ծարավ գնում են, գնում,
Գնում են, գնում, չգիտեն, թե ուր.
Վերջապես մի հով անտառ են մտնում,
Անտառի միջին մի վանգակ աղբիւր:

Կուշտ-կուշտ խմում են են սառը ջրից,
չետո Մանուշը ծառն ե բարձրանում,

Գառնիկ ախպերն ել ծառերի տակին,
Մուշ-մուշ արածում, արբ. ց անում:

Իրիկվան պահին խրխինջ ու քրքիջ...
Լցվում Ե հանկարծ անտառն աղմուկով.
Մոտիկ են գալի ձայները քիչ-քիչ...
Լսում են նրանք վրդովված հոգով...

Եվ ահա վոսկի սանձերից բռնած,
Բերում են, ջրեն ձիանքն արքայի:
Ամեհի ձիանքն աղբիւրից խրտնած,
Ծառս-ծառս են կանգնում ու մոտ չեն գալի:

Մոտիկ են տալի ծառայքը մեկ ել,
Վոր սիրուն մի ցուք ջրի մեջն ընկել,
Վոր ջուրը քանի ալիք Ե տալի,
Նա ել ջրի հետ գնում Ե գալի:

Նայում են վերև: Ինչ տեսան, աստված.
Մի հուր-հրեղեն, մի շարմաղ աղջիկ,
Ծառի ճիւղերին նապելի նստած,
Նայում Ե ներքև լռիկ ու մնջիկ:

Մի սիրուն աղջիկ արմանք ու վարմանք:
Չարմանք Ե պատում խեղճ ծառաներին:
Տեր աստված, արդեոք ինչ հրաշք Ե սա,
Վայրի անտառում, իջած Ես ծառին:

- Ով Ես, չքնաղ, տեսիլք Ես դու, թե՞
հողեղեն արարած: Թե տեսիլք Ես, կաց մի
քիչ ել, թե աղջիկ Ես, արի ցած: Ցանց եկ,
տեսնենք, եդ վոնց ելավ, վոր ծագեցիր
դու մեզ մոտ. վոր երջանիկ հողմը բերավ
քեզ մեզ անտառն անձանոթ:

«Մեզ վորբութեան ցավն Ե բերել
ձեր աշխարհքը հեռավոր, - պատասխա-
նեց մեր Մանուշը, հառաչելով գլխիկոր:
- Մենք տուն չունենք, վոչ ապավեն Ես
լայն արձակ աշխարհքում, մութն ել հի-
մի շուտով կընկնի, վախենում ենք ան-
տառում: Ես ձեզ համար աղոթք կա-
նեմ, եթե անեք ոգնութիւն, Ես վայրե-
նի խոր անտառից եթե տանեք մեզ մի
տուն»:

Ու ծառաները գառն ու աղջկան

Առնում են, բերում պալատն արքայի:
«Ո՛վ ես դու, սիրուն, հարցնում ե արքան,
Անբան գառան հետ ինչ ես ման գալի»:

Կանգնում ե աղջիկն ետեղ նորից նոր
Պատմում ե, ինչ վոր պատմեցի ես ձեզ
Թե՛ ապրած կենաս, ահեղ թագավոր,
Մեր բանը հապա՛, եսպե՛ս ու եսպե՛ս...

Թագավորն երբ վոր լսում ե մին-մին՝
Եվ շատ ցավում ե, և շատ հավանում,
Կարգում ե նրան իրեն թագուհին,
Եոթն որ, եոթ գիշեր հարսանիք անում:

Ու փառքի միջում, շքեղ դահլիճում,
Լիքն ու երջանիկ ապրում ե Մանուշ,
Գառնիկ ախպերն ել ճոխ պարտեպներում
Արոտ ե անում ու խաղում անուշ:

3.

Պալատումը կար նախանձուտ ու չար
Մի պառավ կնիկ, հնուց աղախին:
Նախանձում ե սա, թե վոնց պիտի գա
Մի վորբ՝ թագուհի դառնա մեր գլխին:

Մի որ ել գալի, գլուխ ե տալի,
Առաջը կանգնում, կեղծավոր գովում.
- Արի քեզ տանեմ, սիրուն թագուհի,
Զլփ-չլփ լողացնեմ շարմաղ ես ծովում:

Խարում ե, տանում, գցում ծովի մեջ,
Շորերը առնում, ետ բերում քաղաք.
Հագցընում իր սև խափշիկ աղջկան,
Պալատ ուղարկում թագուհու տեղակ:

Երեսը ժաճկած թանձր շղարշով,
Պալատն ե մտնում են սուտ թագուհին,
Ու թագավորն ել կասկած չի անում,
Թե ով ե եկել, բազմե՛լ իր գահին:

Բայց ինչ անում են, ինչ վոր չեն անում
Ձեր կարում եղ տուն բերեն գառնիկին.
Բըղըում, ես ափից են ափն ե վազում,
Բըղըում, են ափից ետ գալի կրկին:

Ինչ անենք սրան, վոնց անենք սրան,
Աղջիկն ու մայրը շատ են միտք անում,
Վերջը գալիս ե դարձվոր Թագուհին,
Անկողին մտնում, հիվանդ ձևանում:

- Վայ, աման, մեռա... հայ, հարայ, մեռա...
«Վորտեղդ ե ցավում, սիրուն Թագուհիս,
Ինչ կուզես, ասա», - խնդրում ե արքան,
Խնդրում, գլխովը պտույտ ե գալիս:

- Ախորժակ չունիմ, ... ես բան չեմ ուզում...
Գառնիկի մտից վոր լինի, կուտեմ...
Եվ Թագավորը մնում ե սառած,
Սառած, շվարած, կանգնած կնոջ դեմ:

«Բայց չե՞ վոր, Մանուշ, քո եղբայրն ե նա,
Վոնց ես նրա միսն ուզում դու հիմա»...

- Ինչ անեմ. ինձնից նա աչիվ հո չի.
Ես վոր մեռնում եմ, Թող նա ել կորչի...
Վայ, հարայ, մեռա... հայ, հարայ, աման...
Ու Թագավորը տալիս ե հրաման. -

«Կրակ վառեցեք, դանակ սրեցեք, բե-
րեք մորթեցեք Ախպեր գառնուկին, Թող նա
չո՞հ լինի իրա քույրիկին»

Թագավորն եսպես պատվեր ե տալի,
Պատվեր ե տալի ու դուրս ե գալի,
Գնում ե ծովափ սաստիկ սրտնեղած,
Թե վորքան Մանուշ անգուժե եղած:

4

Մայում ե, լալիս խեղճ Գառնիկ-Ախպեր,
Եվ լացացընում ծովի ժեռ ափեր,
Մի ափից բռնած միև ափն ե թռչում.
Մարդկային լեզվով քրոջը կանչում. -

- Քուրիկ ջան, քուրիկ, կրակ են վա-
ռում, կրակ են վառում, դանակ են սրում:
Քուրիկ ջան, քուրիկ, լսիր անդուռնդից

սպանում են ինձ:

Լսում ե արքան տեղը քար կտրած, և
ալիքների միջիցը հանկարծ շատ ծանոթ մի
ձայն հեռու, խոնկ ու խոփ կանչում ե քըն-
քուշ, կանչում ե անգոր.

«Ախպեր ջան, ախպեր, անհեր ու ան-
մեր, անքուր ու անտեր, իմ Գառնիկ Ախ-
պեր: Կատաղի ծովի պաղ գերին եմ ես,» փռ-
փրած ալիքը պահապան վրես: Դժար ե
տեղս, ձենս չեն լսում, ձենս չեն լսում,
ձեռքս չի հասնում: Ախ, չար պառավը
սև արավ որս, այժմ ել կսպանի Գառ-
նիկ-Ախպորս:

Լսում ե արքան, պալատն ե վազում,
Պատում ե քողը թագուհու շեմքի,
Պատում ե, տեսնում... բայց ինչ ե տեսնում,
Ով ե իր գահին եղել թագուհի...

– Եկեք, ձկնորսներ, ուռկան ձգեցեք
Հանեցեք ծովից մեր լավ Մանուշին,
Եկեք, դահիձներ, ծովը ձգեցեք
Կախարդ. ասումս վին ու ես հոնջին:

Այսպես բարկացած գոռում ե արքան,
ժողովուրդն ամեն թնդում ե ցավից,
Գալիս ե, կանգնում, ձգում ե ուռկան,
Անմեղ Մանուշին հանում ե ծովից:

Հանում ե ծովից, գահին բազմեցնում
Հաղթում ե այսպես անմեղը կրկին,
Գառնիկ-Ախպերն ել անչափ խնդումից
Պատում ե իրեն վոչխարի մորթին,

Դուրս գալի, կանգնում սիրուն տղամարդ,
ձակատը պայծառ, աչքերը վառ-վառ,
Վոչխարի տկար մայիլնի տեղակ
Խոսում ե լեզվով ազատ ու ճարտար:

Իսկ չար պառավին ու իր աղջկան,
Վոր խաբել են աշխարհ բովանդակ,
Վզներից կապում ջաղացի քարեր,
Ձգում են ծովի անդունդն անհատակ:

Երկու վորքեր՝ քուր ու ախպեր՝
Առած պատիվ, գահ ու թագ,
Աշխարհքն ելի խաղաղ ու լի,
Զարը թաղված ծովի տակ...

Անմիտ եզներ

Երեք եզը միասին դաշտումն արա -
ծում եին: Եզներից մեկն սպիտակ էր, մեկը
կարմիր և մեկը սև:

Մեկ որ մի քաղցած գայլ մոտեցավ
սրանց և ուզում էր մեկին կամ միւսին վի-
րավորել, բայց եզները քամակ - քամակի
տվին, ցույց տվին գայլին իրանց սրածայր
պոչերը: Գայլը տեսավ, վոր եզներին վոչ
մի վնաս չի կարող տալ, քանի վոր նրանց
մեջ միութիւն կա, մտածեց երկպառակու-
թիւն գցել մեջները, միմիանցից բաժանել,
վոր կարողանա ամեն մեկին ջոկ հաղթել:
- Բարով ձեզ, բարեկամներ, ասաց գայլը,
ես չեմ եկել ձեզ մի վնաս տալու, ձեր
պոչերն ինչու եք իմ դեմ բռնում: Ես ել
ձեզ պես չորս վոտն ունիմ, երկու ականջ,
երկու աչք, մի պոչ, մի բերան, մի գլուխ:
Միթե կարելի բան է, վոր նմանը նմանին
վնաս տա: Բացի այդ՝ դուք սուր-սուր
պոչեր ունեք, ես չունեմ. ձեզանից ամեն

մեկը մի դե ե ահագին, իսկ ես ձեր հորթի
չափ ել չկամ: Համարեցեք, թե ես ձեր
պահապան շունն եմ, թողե՛ք ձեզ մոտ կե-
նամ, ձեզ հետ արածեմ. երեք չլինե՛նք՝
չորս լինե՛նք, ինչ վնաս ունի:

Գայլի այս խոսքերի վրա եզները
միամտվեցին և մի քիչ ել փքվեցին իրանց
պոչերովը, մանավանդ երբ տեսան, վոր
գայլն ել է արածում: Բայց գայլի փորը
ցավում էր, նրա համար էր արածում, և
այն ել վոչ թե արածում էր, այլ խոտե-
րը պոկում էր, ել ետ վեր էր աժում, և
եզներին խաբելու համար, ցույց էր տալիս,
վոր իբր թե նրանց նման արածում է:

Վերջը՝ երբ սպիտակ եզը մի կողմը
քաշվեց և սևն ու կարմիրը միւս կողմը,
գայլը մոտեցավ ջուխտ եզներին և փսփո-
սաց նրանց ականջին:

- Բարեկամներ, դուք երկար չեք կարող
այս կանաչ խոտումն արածել. սպիտակ
եզն իր գույնովը ձեզ փորձանքի մեջ կծգի:
Դուք ձեր գույնովը ցերեկն ել չեք երևում,

իսկ սպիտակը գիշերն ել ե լույս տալիս ճրա-
գի նման: Ծաղկակոխները (ուզում ե ասել
գայլերը) շուտ կտեսնեն նրան և կգան:
Նրա պատճառով դուք ել կընկնեք փոր-
ձանքի մեջ և կպատժվեք:

- Բո - բո - բա - բա, գոչեցին եղները մի-
աբերան, վորով ուզում եին ասել « միթե
ճշմարիտ ես ասում»:

- Իհարկե, ասաց գայլը, ես ինչ ոգուտ
ունեմ սուտ ասելու, ես ձեր լավութիւնն
եմ ուզում:

- Մա - մա - մո - մո, ասացին եղները.
այսինքն «ինչ անենք ուրեմն, վոր ազատ-
վենք այս փորձանքից:

- Վոչինչ հարկավոր չե, ասաց գայլը
դուք ձեզ համար արածեցեք այստեղ, ես
կապատեմ ձեզ նրանից:

Եղները կամք տվին, և գայլը գնաց
սպիտակի բկիցը բռնեց: Սպիտակն իր որ-
հասական գոռոցով և բղբղոցով միւսնե-
րին ոգնութեան կանչեց, թե եկեք, ընկեր-
ներ, ոգնեցեք, սա գայլ ե, մեկ որ ել ձեր

բկին կչոքի, իսկ սև ու կարմիրը նրան
չոգնեցին, այլ ուրախանալով ասացին -
- Բո հախն ե, անպիտան, ինչու դու սպի-
տակ ես և վոչ մեկ պես կարմիր կամ սև.
դու քո անպիտան գույնովդ մեկ ել պի-
տի կրակի մեջ գցեիր:

Երբ վոր գայլը հատացրեց Սպիտա-
կի միտը և նորից քաղցեց, մեկ որ ել մո-
տեցավ Սևին և փսփսաց ականջին.

- Գիտես ինչ կա. ես անցեալ անգամ
քեզ վոչինչ չասացի, վորովհետև Կարմի-
րը մոտդ եր. բայց հիմա պարտք եմ հա-
մարում ասել, վոր կարմիր գույնը նույն-
քան վնասակար ե, ինչքան և սպիտակը:
Միայն քո գույնն ե շահավետ, վոր վոչ
ցերեկն ե երևում և վոչ գիշերը: Եկ ինձ
լսիր և թող կարմրիցը ազատեմ քեզ: Այ-
նուհետև դու մենակ կարածես, նրա բա-
ժին խոտն ել քեզ կմնա:

Սևուկը կամք տվավ. գայլը գնաց
Կարմրի բկիցը բռնեց: Կարմիրն աղաղա-

կեց և Սևուկին ոգնութեան կանչեց,
ասելով.

— Արի՛, ոգնիր ինձ, սպանենք այս կեղծա-
վորին, թե չե՛ մեկ որ ել քո բկին կշոքի:

Սևուկը հեռու կանգնած, փորն
ուռցրած, պոպերը չարդախ արած, տես-
նում էր իր ընկերոջ մահը և ուրախանա-
լով՝ ասում.

— Քո հախն ե. ինչո՞ւ դու ել ինձ պես
սև չես. քո անպիտան կարմիր գույնովդ
ինձ ել պիտի կրակի մեջ գցեիր: Այսու-
հետև քո բաժին խոտն ել ինձ կմսա, ես
մենակ կուտեմ և ավելի կգիրանամ:

—

Մի քանի որից հետո անկուշտ գայ-
լը կարմրի միտը հատացրել էր և կրկին
քաղցել: Մոտեցավ Սևուկին և ասաց.

— Բարեկամ, ախորժակս բացվել է. ելի
միս ե ուզում սիրտս: Ասում են՝ եթե
ատամներդ սև ելան կաշվին քսես, իս-
կույն կկշտանաս, ել քո որումը չես
քաղցիլ: Մտածեցի, վոր սրանից լավ բան

ել ինչ կլինի: Կերթամ, ասացի, ասում-
ներս մեր Սևուկի կաշվին կքսեմ և կը-
կշտանամ, նա ել այնուհետև ել երկիւղ
չի ունենա ինձանից, և մենք ավելի սիրով
կապրենք:

— Բո՛, հո՛մ — հո՛մ, ասաց Սևուկը, վոր կր-
նշանակե, թե — այդ ինչ լավ բան են
ասել: Ճշմարիտ վոր միշտ կասկածով եմ նա-
յում քեզ վերա, բայց վոր կուշտ կլինես,
ինչ ասել կուզի, վոր ել ինձ վնաս չես
տա: Ահա իմ կաշին, ատամներդ վրան
քսիր, ինչքան կամենում ես:

— Ծնորհակալ եմ, բարեկամ, շատ շնոր-
հակալ, վոր այդքան բարի ես. միայն խնդ-
րեմ վոր մի րոպե աչքերդ փակես, եթե
լոչ կաշիդ չի ազդիլ ատամներիս վրա.
այսպես են ասում, ես ինքս ել չգիտես
թե ինչու:

Սևուկն աչքերը փակեց. են փակվելն
եր վոր փակվեց և մինչև այսօր ել դեռ
փակված են:

ԱՇԱԿԵՐՏԻ ՈՐԱԳՐԻՑ

Ապրիլի 24-ին

Այսօր մենք ուսուցչի հետ գնացինք
Գազանանոց: Վորքան կենդանիներ կային
այնտեղ. առիւծ, վագր, արջ, գայլ... գեղե-
ցիկ թռչուններ, խոսուն թուփակ: Դպրոց
վերադարձանք թե չե՛ս, ամեն մեկս սկսեց
նկարել ինչ ուզում է: Վարսիկը նկարեց
թուփակ, իսկ ես նկարեցի գազանանոցի բա-
կի փոքրիկ տնակը իր կողքի գեղեցիկ ծա-
ռերով:

Ապրիլի 27-ին

Մեր բնակարանը անհարմար էր: Վա-
ղուց հայրս փնտրում էր ուրիշը: Երկար
վորոնումներից հետո վերջապես նրան հա-
ջողվեց գտնել նորը: Երեկ ամբողջ օրը
չբազմա՛ծ եինք փոխադրութեամբ: Մեր
նոր բնակարանը գտնվում է փոստին կից

տանը: Այնտեղ է ապրում նաև իմ քե-
ռին: Այսուհետև ինձ համար ավելի ուրախ
կլինի. տատիկս երեկոները մեզ համար լավ
լավ հեքիաթներ կպատմի:

Ապրիլի 29-ին

Կիրակի օրը ուսուցչի առաջնորդու-
թեամբ մենք գնացինք զբոսանքի: Առավո-
տը թարմ ու զով անտառով հասանք գե-
տափ: Պարզ ու վճիտ ջրերովմ երամով խայ-
տում էին ձկնիկները: Սիրուն թռչունները
երամ-երամ անուշ ձվկոցով թռչկոտում
էին ծառից ծառ: Ծիծեռնակը իր ճուվողի-
նով, իսկ սոխակը իր դալալակով ողն
էին լցրել: Ինչ քաղցր ժամանակ անց կաց-
րինք մենք:

Յրբեք չե՛մ մոռանալու ես այդ

օրը:

Ապրիլի 30-ին

Մեր դպրոցական տարեվերջի հան-
դեսը կամաց-կամաց պատրաստվում է:
Այս անգամ խաղալու ենք «Կարմիր Ծա-
ղիկ» մանկական պիեսը: Ես կատարում
եմ սեղանապետի դերը, իսկ Կարմիր Ծա-
ղիկը լինելու է Պարզեան Սաթուն:
Ուսուցիչն ասում է, վոր շատ շքեղ
հանգես ե սպասվում: Վարժուհիները
մեծ աշակերտուհիների հետ միասին
գույնզգույն կտորներից և թղթերից գե-
ղեցիկ շորեր և գլխարկներ են կարում
խաղացողներին համար: Ահ, երբ կգա
այդ ցանկալի օրը:

Մայիսի 1-ին

Մայիսի մեկն է:

Բոլոր աշակերտներս խումբ-խումբ

գնացինք քաղաքային հրապարակը: Ծա-
րան-շարան կարմիր դրոշակներով բան-
վորներն ու կարմիր վրնվորները երգե-
լով հավաքվեցին:

Ինչքան կարմիր դրոշակներ...

Հրապարակի մեջտեղը բարձր ամ-
բիոնից շատերը խոսեցին:

Քանի՜-քանի՜ մարդիկ ամբողջ աշ-
խարհում այսօր տոնում են բանվորա-
կան մեծ տոնը:

Մայիսի 4-ին

Երեկոտան ուսուցիչա եկել էր հայ-
րիկիս մոտ: Երկար զրուցում եին, բայց
ես չեի հասկանում, թե ինչի մասին են
խոսում: Երբ ուսուցիչս տուն եր գնում,
հայրիկս ասաց նրան.

— Միամիտ կացեք, ընկեր վահան, չենք
թողնի, վոր մեր եղբայրները դռնեդուռ
ընկնեն:

Այսոր առավոտեան դպրոցի բակը
 Եր Եր մի խումբ նորեկ մարդկանցով:
 Կանայք, երեխաներ, ծերեր, հիվանդներ...
 Բոլորի դեմքերը գունատ, հագուստները
 հին... Դրանք գաղթականներ էին:

Մեկ եւ տեսնեմ հայրիկս եւ ուրիշ
 ծնողների հետ ուսուցչանոցում նստած
 խորհուրդ են անում: Վերջը իմացա,
 վոր վճռել են ամեն կերպ ոգնել այդ
 խեղճ մարդկանց:

Վորքան ուրախ եմ, վոր հայրիկս եւ
 մասնակցում ե այդ բարի գործին:

Մայիսի 7-ին

Մի շաբաթից ուսումը վերջանում է:
 Սկսվելու ե ամառվա արձակուրդը: Բայց
 մենք անգործ չպիտի մնանք: Ամբողջ ա-
 մառը պետք ե անց կացնենք վորևե աշ-
 խատանքի մեջ: Ընկերներիցս շատերը ար-
 հեստներ են սովորելու, իսկ ես մտադիր
 եմ աշխատել մեր բանջարանոցում:

Ց Ա Ն Կ

	Սրճ
Դասագրքերի	11
Նոր ուղղագրութան մասին	VI
Կարգա	1
Երկու էջայր	4
Վորի պահանջը Մ. Մամիկոնի	5
Գիշտ գրագրու գոխար. Լ. Վարդանի	6
Զանգուր մանուկը	6
Յետ կայ Հ. Հայրապետի	9
Անջնվի շունը	9
Գիշտ դպրոցում Լ. Վարդանի	11
Գ ժողովութան գոխ. Լ. Վարդանի	12
Պարտիզանի խանդ:	12
Աղանջ	15
Աղան էրգրից Լ. Վարդանի	16
Գայի արտաստից գոխ. Գ Մեհի	17
Արջն ա գայլը գոխ. Գ Մեհի	18
Տիբեմից	19
Մայրը	20
Սիբեմի հայրիկ	21

Պատգամն ու այժը	22
Կաշաղակի Հ. Աղաբաբ	24
Երկու թոփ	25
Արևրէ ու Եւրգարտիւրէ փոխ. Ար. Խնկոյտ	26
Արհեստի մացառը քաղցած չի ծնա	26
Ով է կուշտ փոխ Լ. Վարդապետի	28
Հարստութիւն	28
Պարզասիր աղէտագը փոխ. Գ. Մկրտիչ	30
Եռուն ու կարգուն Հ. Թումանյան	31
Հիշատակներ փոխ. Գ. Աղաբաբ	35
Պատգամի հազը	36
Սագի	36
Զտու Հ. Հարստագետի	38
Կիցանիւնի բնակարանները շտա ժամանակ	39
Տարիկ	40
Նոր գարշա չվեր Հ. Հարստագետի	41
Զտու	43
Հանգանակ	43
Դարբի Կ. Ս. Եսայան	44
Ծուլը փոխ. Գ. Մկրտիչ	45
Գայլն ու զանաւ փոխ. Գ. Մկրտիչ	46
Գիրի թաղանակ	48

Գարուն	50
Գարունի քաղեր	51
Թիթուր և ճանաչը	54
Ծառերն ու կայտնը	55
Անշրկ	55
Զուր փոխ. Գ. Մկրտիչ	57
Գիրն ու գրտակ	58
Հոյսակ Վարդապետի	58
Խորանակ աղվեր	59
Մանուկի Գորոնի	61
Դարապետ	62
Գարուն	63
Ամսի Կ. Ս. Եսայան	63
Երկրագործ Կ. Ս. Եսայան	64
Հարի Հ. Հոյսանի	66
Լավ ընկեր	67
Միջան և հազը	67
Հանգանակի	69
Ուռնի Ար. Խնկոյտ	70
Ճանաչ Ար. Խնկոյտ	71
Ցորի ու գարնի փոխ. Գ. Մկրտիչ	72
Երգանակ	72



Կանխոր սայլապաններ թարգմ. Ղ. Սղոյան	73
Ճշմարտության Առարկե Կոմ. Գ. Մխիթար	74
Խիղճ Տարր	75
Աճառ	77
Գիշեր	78
Երկրագործի աշխատանք	79
Հանդուր	81
Հալազործի բարեխոսներ	83
Դիպրոտի Գրասխան Հ. Աղաբաբ	84
Խառն աշտեր	85
Վաղնա Կոն	86
Մասրանը Ար. Խնկոյան	87
Սարգս Հ. Հայրապետյան	88
Գիշերյան Կ	89
Զորս Իջանակ Մ. Մամբեյան	90
Գառնիկ աբուր Հ. Թումանյան	93
Անճիկ Իշեր Աշխեն (Ս.Բ.)	104
Աշակերտի որսորդի Գ. Պալտան և Գ. Մխիթար	110

Ծանոթ - Սիր շեռտի քան գրեված քա-
 սագրիքն այնքան էին ինչ, ինչ շատից ցանկերը կո-
 րած ինչ անսթ ինչ ինչ հիշատակներն ինչ-նոր ինչ ինչ:



9064

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ТИРАЖ 2000.

лир
1/570



ТУРКГЛАВЛИТ №9.

ЛИТОГРАФИЯ ТУРКГОСИЗДАТА
ТАШКЕНТ